ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ։ Դերսիմը ոչ նահանգ է և ոչ էլ սահմանափակ շրջան, այլ մի ուրույն լեռնաշխարհ է՝ կիրճերով, սարահարթերով ու հովիտներով։ Դերսիմի բնական սահմանները բնորոշելու համար պետք է առնել արևելքից Բալեշի, հյուսիս-արևելքից Կարնո, արևմուտքից Խարբերդի (Քարբերդ), հարավ-արևմուտքից Տիգրանակերտի նահանգները։ Սրանք Դերսիմի արտաքին սահմաններն են, իսկ ներքին սահմանագծումը հետևյալն է՝ արևելքից Բյուրակնյան (Բինգյոլ) լեռնաշղթան՝ Մանազկերտը, հարավից՝ Ճապաղջուր-Բալու, Բերկրի (Բերի), հարավ-արևմուտքից՝ Ջարսանջակ և Խոզաթ, հյուսիս-արևմուտքից՝ Օվաճգ, Կամախ (Քյամախ), իսկ հյուսիսային ամբողջ տարածությունը արևելքից արևմուտք՝ Քղի, Դերջան և Երզնկա (Երիզավան), մինչև Կամախի նշանավոր կիրճը, իր մեջ առնելով Սանսա (Սանասար) կիրճը և Երզնկան Դերջանից բաժանող Ճիպլիճիե բարձունքը։

Դերսիմը գտնվում է զույգ լեռնապարիսպների կենտրոնում։ Առաջին լեռնապարիսպը սկսվում է արևելքից՝ Բյուրակնյան (10757 ոտք բարձր ծովի մակերեսից), Մեծ Պաս (Ապաս, 7997 ոտք), Պաշքենտ (6090 ոտք) և Քանթարի լեռներ (8438 ոտք)[1]։ Դեպի հարավ՝ Սերոքի (Սերորի) լեռները, Հաճըյան (5885 ոտք), Փոքր Պաս (Ապաս, 6640 ոտք) գագաթներով։ Ապա ուղղակի հարավ, արևելքից մինչև արևմուտք ձգվում է Տավրոսի լեռնաշղթան՝ Տարքոշ-տերե, Ղոշ-Ղոշի ձոր, Սյուրի-Սյուրի, Բալուի լեռներ և Սարի-մեշե կետերով։ Արևմուտքից՝ Ջարսանջակի լեռնաշղթան, հյուսիս-արևմուտքից՝ Քաղցր-ջուրի լեռները (8000 ոտք) և Մնձուր լեռը (8500 ոտք)։

Հյուսիսային մասն են կազմում Տողան-պապա, Ղազան-Ղայա (3163 մ), Մեռճան. (3000 մ) և Ավզերտի-Կետիկ լեռները[2]։ Հյուսիս-արևելքից՝ Աղջրի-սարեր, Սևքար (Ղարա-Ղայա), Կարմիրբերդ (Ղըզըլ-Ղալե, 7133 ոտք) լեռները։

Կենտրոնական Դերսիմը կամ միջուկը՝ Ղութիտերեսին, որ ամենաանառիկն է, շրջապատված է հյուսիս-արևմուտքից, հյուսիսից և հյուսիս-արևելքից՝ Գեղամա, Տուժիկ-պապա, Պաղր-պապա, Շեյթան-ղայա, Սուրբ-լույս (Սելպուս), Ալատբերդ (Քղիի կողմից), Վիշապասար, Սել-սանջակ և Մալ լեռներով։ Հարավում, արևելքից-արևմուտք, Տավրոսի լեռնաշղթայի ուղղությամբ, ձգվում են Դերսիմին նայող հաջորդ լեռնագագաթները։

Այսպիսով, Դերսիմը ինքն իր մեջ կղզիացած, բնական լեռնապարիսպներով պաշարված, անմատչելի ապառաժներով պաշտպանված և արտաքին աշխարհից կտրված ինքնանկախ լեռնաշխարհ է։

ԳԵՏԵՐ ՈՒ ԳԵՏԱԿՆԵՐ։ Եփրատ կամ Ֆռաթ։ Սկիզբ է առնում Բյուրակնյան լեռների հյուսիս-արևելյան կողերից բխող հազարավոր աղբյուրների մշտահոս ջրերից և հյուսիսում նախ թեքվելով դեպի աջ, ապա փոխելով ուղղությունը դեպի արևմուտք, անցնում է Մամախաթունի առջևից և Դերջանի հովիտը երկու մասի բաժանելով, Կոթերի պատմական կամուրջի տակով, Վիժանի առջևից հոսելով ուղղակի արևմուտք, Ճիպլիճիե լեռան ստորոտում ճեղքում է Սանսայի կիրճը և դուրս գալիս Երզնկայի հովիտը ու շարունակելով ընթացքը դեպի արևմուտք, Կամախի կիրճից անցնում է Կամախ, ապա դառնալով դեպի հյուսիս-արևմուտք և Մեծկերտի առջև դուրս գալով Կամախի սահմաններից, անցնում է Բյունյուկիան և դեռ Ակն քաղաքը չհասած, հյուսիս-արևմուտքից հանկարծ շրջվում է հարավ-արևմուտք և Ակնի առջև բոլորակ գիծ ձևացնելով, շարունակում ընթացքը դեպի Ծովք, ուր Ծովքի և Կապան-մատենի առջև միանում է Դերսիմից եկող իր քրոջը՝ Արածանի գետին։

Եփրատի ձախ ճյուղը՝ Արածանին, ծնունդ առնելով նույն Բյուրակնյան լեռների հարավ-արևելքից, գրեթե Եփրատին զուգահեռ, բայց բոլորովին

[1] Լեռների բարձրության չափերը առել եմ Լինչի քարտեզից, ուր բոլոր բարձրությունները նշանակված են ոտքով։

[2] Լեռների մետրային չափի բարձրությունը առել եմ «Օսմանեան կայսրութիւն» քարտեզից (Կ. Պոլիս, 1913)։

տարբեր շրջաններից անցնելով, թեքվում է դեպի արևմուտք, ուր որպես Մուրատ-չայ Ճապաղջրի առջևից կտրում է Դերսիմի սահմանը և ապա, Քղիի տակ՝ Լըշկ-գետ, հետո՝ Բալվագետ ու Բերիդետ կոչվելով, անցնում է Խոզաթը Դերսիմից բաժանող նշանավոր կիրճը և դուրս գալիս Դերսիմի ներքին սահմաններից ու Ծովքի մեջ միանում Եփրատ գետին։

Այսպես, Եփրատն ու Արածանին, Բյուրակնյան լեռներից մինչև Կտպան-մատեն Դերսիմն առած իրենց բազուկների մեջ, նրան տալիս են մեծ թեբակղզու երևույթ։

Այս գետերն իրենց մեջ ընդունում են շատ գետակներ և առատահոս ջրեր։ Արածանին մինչև Ճապաղջրին հասնելը հատվում է տասնյոթ ջրառատ ձորի հետ։ Առաջինը Մանազկերտի չայն է, որն իր ծագումն առնում է Նուրետին սարից (5370 ոտք)։ Երկրորդ ջուրն իր սկիզբն առնում է Ավրանք լեռան արևելյան կողերից, իսկ երրորդ, չորրորդ և հինգերորդ ձորերը՝ նույն լեռան արևմտյան գագաթներից, ու բոլորն էլ առանց մեկը մյուսին միանալու և հոսելով տարբեր ուղղություններով, իրարից որոշ հեռավորությունների վրա միանում են Արածանիին։ Վեցերորդ և յոթերորդ ձորերն իրենց ծագումն առնում են Գարասեիտ լեռան լանջերից և Շարպայիր գյուղի առջև միանալով իրար՝ առնում են Շարպայիր-ջուր անունը և Խանձոր գյուղի ստորոտում դարձյալ միանում Արածանիին։ Հաջորդ վեց ձորերը սկիզբ են առնում ջրառատ Պասի (Ապաս) կողերից։ Դրանցից երկուսը՝ Նոր-շեն գյուղի ստորոտում, իսկ մնացյալները Ջիարեթ գյուղի ստորոտում խառնվում են Արածանիին։ Մնացյալ չորս ջրերը ծագում առնելով Փոքր-Պասի և Քարախայա լեռներից, Արածանիին են հասնում Ճապաղջրից դեպի արևելք, Նեվշան գյուղի ստորոտում։

Լըշկի-ջուրը (Արածանիի գլխավոր վտակներից մեկը) իր ծագումն առնում է Դերսիմից հյուսիս-արևելք և Քղիից արևելք գտնվող Կարմիրբերդի լեռներից։ Այս գետին միանում են տասնըվեց ձորեր, որոնցից առաջին հինգը սկսվում են նույն լեռան արևելյան գագաթներից։ Այնուհետև անցնելով Ճաֆեր-պապա լեռան ստորոտից և ս. Կիրակոս վանքի արևելյան կողմում թեքվելով դեպի հարավ, Ալթուն-Հյուսեինի և Ազատ բերդի շրջակայքում դետը փոխում է ուղղությունը դեպի հարավ-արևմուտք, ապա հոսելով Թեղմորուքի, Հորհորի, Հալատոսի, Սանջակի, Ջաթի Սիմսորի և Մանսուրի շրջակայքով և իր մեջ ընդունելով համանուն ձորերի ջրերը, Շարիպ գյուղից վեր ընդունում է Ճաֆեր-պապայից ծագում առնող հինգ և Սանջակ լեռից սկսվող վեց ձորերի ջրերը, Լըշկչայ դետը միանում է Արածանիին։

Երկրորդ մեծ ջուրը, որ միանում է Արածանի դետին, Քղիի ջուրն է։ Սույն գետը, որ քաղաքը բաժանում է երկու մասի, նախքան քաղաք հասնելը կոչվում է Քարայրաձոր, որն իր անունն առած է Դավթի-սարի վրա գտնվող քարայրներից (որոնք բյուզանդացիների կողմից փորված հանքահորեր են, և որոնցից մեկը շատ երկար է)։ Քարայրաձորի գետակին միանում են Միանձում և Սեիտ-Ղասմ լեռներից հոսող համանուն ձորերի ջրերը, իսկ բուն Քղիի ջուրը իր ծագումն առնում է Աժդահա-լեռից։ Սա իր հերթին ընդունում է երկու մեծ ջրեր՝ Ֆեմի ջուրը (որը կազմվում է երեք ճյուղից) և Կապույտ ծովի ջուրը։ Քղիի ջուրն անցնելով Առնես գյուղի վերևից և քերելով Մեղրե, Այգեստան և Խոր-Խոռ գյուղերի եզերքները, Շեյթան-ղայա լեռան ստորոտով հասնում է Քղիի տակ։ Միացյալ այս ջրերը կոչվում են Գայլ գետ (չշփոթել Երզնկայի արևմտյան և Կամախի արևելյան կողմը գտնվող Գայլ գետի հետ)։

Կապույտ-ծովի ջուրը իր ծագումն առնում է համանուն լեռան (Կապույտ լեռ) լճից։ Սա թեև շատ մեծ չէ, բայց շատ խորն է և չնայած իր մեջ որևէ գետ չի ընդունում և սկիզբ է տալիս համանուն դետին, տարվա չորս եղանակներին ոչ ավելանում է, ոչ պակասում։ Այս ջուրը անցնելով Կապույտ-ծով գյուղի միջից, թեքվում է դեպի հարավ և Հաղստան գյուղից վեր միանում Զոխմախի ջրին։ Զոխմախի ջուրը իր անունն ու ծագումն առնում է համանուն լեռից, որը գտնվում է Քղիից հյուսիս-արևելք, դեպի Դերջան երկարող լեռնաշղթայի մեջ։ Հոսելով դեպի հարավ, անցնում է Ապառ բերդաքաղաքի ստորոտով՝ դեպի Առեր (Առավիք), ապա Օրոր գյուղը, որտեղ նրան միանում է Օրորի ջուրը։ Սրա ակունքը Աստղաբերդի սարերն են։ Օրորի ջուրը այնուհետև անցնելով մի քանի գյուղերով, միանում է Քղիի կենտրոնական ջրին՝ Գայլ գետին, սա էլ միանում է Բոլոմորիի ջրին։

Բոլոմորիի ջուրը բաղկացած է տասնչորս ձորերից, որոնցից չորսը ծնունդ են առնում Պաղրպապայի արևմտյան և հարավային լանջերից, չորսը՝ Ղուզուլջանի լեռներից, չորսը՝ Տուժիկ-պապայի կողմերից, իսկ մնացյալ երկուսը՝ Սել (կամ Սեմ) լեռան ակունքներից։ Այնուհետև Բոլոմորիի ջուրը հոսելով դեպի հարավ-արևմուտք, Սաղան և Պայազիտ գյուղերի միջև միանում է Մնձուրի ջրին (Մունզուր-ջուր)։

Մնձուրի ջուրը կազմվում է յոթ ձորերից։ Առաջինը Մնձուր-ջուրն է, որը բխում է Մնձուր լեռան դեպի Դերսիմ նայող գագաթներից, երկրորդը և երրորդը՝ Օվաճգի Քաղցր-ջրի լեռներից։ Դրանք անցնելով Փիր-Սուլթանի ստորոտով և թեքվելով դեպի հարավ, Դաշտակի մոտ միանում են իրար, իսկ մնացյալ չորս ձորերը, որ ծնունդ են առնում Տուժիկ-պասլայի հարավ-արևելյան բարձունքներից և հոսելով Հալորիի ս. Կարապետ վանքի աջ և ձախ կողմերով, ճիշտ վանքի տակ միանում են իրար և կազմում Մնձուրի ջուրը, որը Բոլոմորիի ջրի հետ գիրկընդխառն հոսելով դեպի արևմուտք, խառնվում է Դաշտակի ջրին։

Դաշտակի ջուրը ևս իր ծագումն առնում է Օվաճգի Քաղցր-ջրի լեռներից, որին միանում են Բոզվանքի և Մագիերտի երեք ձորերը և խառնվում Բոլոմորիի ջրին։

Միացյալ այս ջրերը հոսելով դեպի հարավ-արևմուտք, խառնվում են Քղիից եկող մեծ ջրին և Բերիի ջրի հետ միասին թափվում Արածանին։

Արածանին իր մեջ ընդունելով վերը նշված ջրերի հոսանքը և առաջանալով դեպի արևմուտք, դեռ Դերսիմի կիրճից դուրս չեկած, ընդունում է Խոզաթի, Զարսանջակի և Պաղաձորի ջրերը։

Խոզաթի ջուրը կազմվում է երկու ջրից՝ Դաշտակի արևմտյան բարձունքներից և Արսենիկի արևմտյան լեռներից իջնող վտակներից, և թափվում է Արածանի։

Զարսանջակի ջրին միանում են Կյուզյուքի և Պաղաձորի ջրերը և հոսելով դեպի արևմուտք ու թեքվելով հարավ, Եղրևանի առջև միանում են Արածանիին։

Պաղաձորը բացի իր ձախ թևից, որ միացած է Զարսանջակի ջրին, ունի և մի աջ բազուկ, որն սկիզբ է առնում համանուն լեռներից և հոսելով միշտ դեպի հարավ, տեղ-տեղ նույնիսկ թեքվելով արևելք, Աշխենիկ գյուղի ստորոտում միանում է Արածանիին։

Այժմ հետևենք Քղիից Կամախ, ձախ ափից Եփրատին խառնվող ջրերի հոսանքին։

Աղի-ջուրը ծագում է առնում Ղարա-Ղայայի և Զերտիկի լեռներից։ Կազմվում է յոթ ջրերից։ Սրանցից առաջինը բխում է Կարմիր բերդի լեռան հարավային բարձունքից, որը գտնվում է Կարնո արևմտյան կողմից դեպի Մամախաթուն երկարող լեռնաշղթայի ճիշտ կենտրոնում։ Անցնելով Հայտարի գյուղի առջևից, հոսում է դեպի արևմուտք։ Երկրորդ և երրորդ ձորերը սկսվում են Զերտիկի լեռան արևմտյան կողերից և անցնելով Զերտիկ և Մերտիվեն գյուղերից, Սոս գյուղի առջև միանում են առաջին ջրին։ Չորրորդ ձորի ջուրը, որ ծագում է առնում Ղարա-Ղայայի արևմտյան լանջերից, անցնելով Օվաճգ (չշփոթել Երզնկայի համանուն ավանի հետ) և Բելեկոս գյուղերի առջևից, Յայլաճրգի տակ ընդունում է հինգերորդ ձորի ջուրը, որը հոսելով դեպի հյուսիս-արևմուտք, Քարսան գյուղի ստորոտում միանում է առաջին երեք միացյալ ջրերին։ Վեց և յոթերորդ ձորերի ջրերը, որ ծագում են առնում Յայլաճգ լեռան բարձունքներից, Յայլաճգ գյուղի ստորոտում միանում են վերի հինգ ձորերի ջրին և հոսելով դեպի հյուսիս, Հայք (չշփոթել Դերսիմի Հայքի հետ) և Կոթեր գյուղերի միջև միանում են Եփրատին։

Խարխինի ջուրը ծագում է առնում Կեիկտաղիի արևմտյան բարձունքներից և հոսելով դեպի հյուսիս ու միանալով երկրորդ ձորակի ջրին, Խարխինի տակ միանում է Եփրատին։

Մոզանի զույգ ձորերից առաջինը ծագում է առնում Ագվերենի գագաթից և հասնելով Մոզանի ստորոտը, միանում է երկրորդ ձորին, Զիաերիի մոտ խառնվելով Եփրատին։

Ագվերենի ջրի աջ ու ձախ ճյուղերը, որ ծագում են առնում՝ առաջինը Կերտիմի լեռից, երկրորդը՝ Պաղինից, Ագվերեն գյուղից վեր միանում են իրար և Սանսա կիրճի մուտքի մոտ խառնվում Եփրատին։

Սանսա կիրճի առաջին ջուրը կազմվում է Պաղին լեռան արևմտյան լանջերից, իսկ երկրորդը՝ Ավզերտ լեռան արևելյան կողերից, որոնք Փինթիկ գյուղի ստորոտում միանում են Եփրատին։

Թլակա ջրի երեք ճյուղերը ծագում առնելով Ավզերտից, զանազան ուղղությամբ հոսելով հասնում են Թլակ և դեռ գյուղ չմտած միանալով իրար, նույն գյուղի ստորոտում խառնվում են Եփրատին։

Էրտինեի ջուրը կազմվում է չորս գլխավոր ձորերից, առաջին երկուսը՝ արևելյան, երրորդը և չորրորդը՝ արևմտյան գագաթներից հոսելով դեպի հյուսիս, ապա թեքվելով հյուսիս-արևմուտք, Էրտինի գյուղի ստորոտում միանում են իրար և Առան գյուղից ներքև խառնվում Եփրատին։

Ղոլանեուղի ջուրը ծագում է առնում Պաղրի հարավային բարձունքից և անցնելով Նշան Խանջյանի ագարակի միջից, թեքվում է դեպի արևմուտք և Շիլիի դիմաց միանում Եփրատին։

Եփրատ գետը Տիպեոլիի (Երզնկան Կարինին կապող պետական միակ խճուղին) դիմաց, Թլակից քիչ վար բաժանվում է երկու թևի, մեկը՝ աջ,

մյուսը՝ ձախ հոսելով, իրենց բազուկների մեջ են առնում Մխլի և Սերթիքլի թրքաբնակ գյուղերը և ձվաձև մի մեծ կղզի կազմելուց հետո, Վերին Ղատաղանի առջև նորից միանում են ու շարունակելով հոսել դեպի արևմուտք, Տենիղտամիի առջև կրկին բաժանվում են երկու ճյուղի՝ Մեծ գետ և Պզտիկ գետ անուններով, ապա շրջապատելով Մահմուտցիք, Քերքյուղե, Պալի-պեկ և Կյուլիճե գյուղերը ու կազմելով երկրորդ մեծ կղզին, Արշակա կամուրջի առջև միանում են իրար։

Մենձուր-չայի (կամ Մեռջանի) ջուրը կազմվում է հինգ ճյուղերից, որոնցից երկուսը ծագում են առնում Մենձուր լեռան գագաթներից, երրորդը՝ Քելլեր լեռից, իսկ չորրորդը և հինգերորդը՝ նույն լեռան հյուսիսային կողերից։ Առաջին ձորը անցնելով Մաղա-ջրի առջևից, հասնում է Զարշարանայ ս. Գրիգոր լուսավորչի վանքը, որտեղ միանալով առաջին երկու ձորերին և շարունակելով հոսել դեպի հյուսիս, Սրպիան (սուրբ Օհան) քրդարնակ գյուղից վեր միանալով չորրորդ և հինգերորդ ջրերին և անցնելով Բլուր և Ուռեկ գյուղերի միջից, նույն գյուղի ստորոտում միանում է Եփրատին։

Քիի ս. Հայրապետի վանքի և ուսումնարանի ջրերը ծագում են առնում Մենձուր լեռան աջ և ձախ դագաթներից, նախ հոսելով դեպի հյուսիս, ապա թեքվելով դեպի արևմուտք, ս. Գևորգ վանքի առջև միանում են ու անցնելով Երկան, Կելնցիք, Նեբսես հայրապետի և Քիի միջից ու փոխելով ընթացքը դեպի հյուսիս, անցնում են Մաթերի վերևից ու Մահմուտցիք (Մալմուտցիք) գյուղի առջև միանում Եփրատին։

Թլխասի ջուրը կազմվում է երկու ձորից, որոնցից առաջինը Մենձուր լեռան արևմտյան գագաթից, իսկ երկրորդը՝ Ղազան-Ղայայի արևելյան բարձունքներից հոսելով, Թլխասից վեր միանում են իրար և անցնելով Բալանղայի առջևից, մեծ գետի կամուրջին չհասած, միանում են Եփրատին։

Հանդեսի ջուրը կազմվում է երեք ձորից, որոնք ծագում են առնում Ղազան-Ղայայի (Ղազան Դաղի) արևմտյան բարձունքներից և հոսելով զանազան ուղղությամբ, Հանդեսի արևմտյան կողմը, Արշակա կամուրջից քիչ վար, միանում են Եփրատին։

Կյոզելերի ջուրը, որ կազմված է երկու ձորից, իր ծագումն առնում է Ղազան-Ղայայի հարավ-արևմտյան բարձունքներից, անցնելով Քրտգեղի միջից, Սրպիան գյուղի դիմաց միանում է Եփրատին։

Կամախի կիրճից մինչև Կապան-Մատեն՝ Եփրատի և Արածանիի միացման կետը, Եփրատի ձախ ափից գետին միացող առաջին մեծ ջուրը Պռասթիկի ջուրն է, որ իր ծագումն առնում է Մընձուր սարի հարավային բարձունքներից, անցնելով Բալանղայի արևմտյան կողմից, Կամախի կիրճի մուտքի մոտ խառնվում է Եփրատին։

Երկրորդը Հոռեկա երկու ձորերն են, որոնք սկսվում են համանուն լեռներից և մեկը՝ գյուղից աջ, մյուսը՝ ձախ հոսելով, նույն գյուղի ստորոտում միանում են իրար և խառնվում Եփրատին։

Երրորդը Քաղցր ջուրն է, որը կազմվում է չորս ձորից, որոնք ծագում են առնում Պաղասար լեռներից և Պարտի գյուղի ստորոտում միանալով իրար, Կամախի մոտերքում խառնվում են Եփրատին։ Աջ կողմից, դարձյալ արևելքից արևմուտք, Եփրատ թափվող վտակներն են. առաջինը զանազան ուղղություններով հոսող և զանազան ձորերից կազմված Աշղալայի ջուրն է, որ Մամախաթունի դիմաց միանում է Եփրատին։

Աշղալայից եկող ջուրը, որին Լիճ գյուղի մոտ միանում են Ալթուն Թաշի երեք ձորերը, հոսելով նախ արևելքից արևմուտք, ապա Աղվեսի (Մղտեսի) ստորոտում թեքվելով դեպի հարավ, Բուրք (Բուլք) գյուղի վերից նոր անկյունադարձ կատարելով, իր մեջ է ընդունում Դերջանի զանազան ուղղություններից եկող մի շարք ձորեր։ Այսպես՝ Ալթուն Թաշից եկող Աշղալայի ջուրը, շարունակաբար իր մեջ ընդունելով Գարատևրենի (Գարատևրենտ) երեք և Օթլուղ լեռից ծագում առնող յոթ ձորերը, Մանց գյուղի առջև (Մամախաթունի դիմաց) միանում է Եփրատին։

Դվնիկի, Պուլմուշի (Պալմուշ) և Տլավի (Տելավ) ջրերը գրեթե նույն ուղղությամբ ծագում են առնում Օթլուղի բարձունքներից և հաջորդաբար միանում Եփրատին։

Զուրունի (Սուրեն) ջուրը, որ ծագում է առնում Մլբերդ (Մհերի բերդ) բարձունքներից, խառնվելով ս. Թորոսի ջրին և Մեծ Գեղի ջրին ու կտրելով Երզնկա-Կարին խճուղին, Սանսա կիրճի հյուսիսային կողմից միանում է Եփրատին։

Ղարահալարի և Պասուռանի ջուրը իր ծագումն առնում է Մլբերդի ստորոտում գտնվող Կարանկոլից (Կարապների լիճ), անցնելով ս. Թորոս վանքի արևմտյան բարձունքներից և հոսելով դեպի արևելք, ապա թեքվելով դեպի հարավ, Ղարաճալար և Պատռան գյուղերի ճիշտ մեջտեղում 150 մետրից ավելի բարձր ժայռից թափվելով վար, շարունակում է հոսել գյուղերի ու մշակելի

դաշտերի միջից, Սանսա կիրճի ստորոտում ընդունելով Ջայ-Գոմի ձորի ջուրը, միանում է Եփրատին։

Խնձորեկի ջուրը կազմվում է Կարմիր լեռից բխող մեծ ակից, որին միանում են նաև զանազան ձորակներ, լեռնակա ձորից թեքվելով արևելքից հարավ և անցնելով Բերդակ լեռան ստորոտից, կոչվում է Բերդրա ձոր ու Թլակի դիմաց խառնվում Եփրատին։

Հայտարի ձորի ջուրը անցնելով սարերից, մտնում է Խնձորեկ գյուղը և հասնելով Տինկ, անցնում է Սանասորի դաշտագետնից, Ղորուղի անտառների ստորոտից և Խալիլ Աղայի խանի (սա Կարին-Երզնկա ճամփի կարևոր օթևաններից է) առջև միանում է Եփրատին։

Զոր-Բերնա ջուրը այս շրջանի ամենամեծ գետն է, որն իր ծագումն առնում է Վերին Քոնիկի լեռներից և ընդունելով Ճերմակ Քարերի և Վարի-Քոնիկի ձորերի ջրերը ու հոսելով դեպի արևմուտք, Հարսիի տակ ընդունում է Մեծ-Մորի լեռան անտառների ջրերը ու մի քանի այլ ձորերի ջրեր և Զոր-Բերնա խանից մի քիչ վար, ճիշտ Մթին կամուրջի մոտ միանում է Եփրատին։

Բաղնիքի ջուրը՝ հանրածանոթ իր առատությամբ, զուլալությամբ, դյուրամարսությամբ ու պաղությամբ, կազմվում է ութ ձորակներից, իր ծագումն առնում է ս. Նիկողոս վանքի վերևի Քեշիշ-Տաղի կենտրոնական գագաթի ստորոտից և ընդունում Գալոների և Կոլերի սարալանջերից բխող երեք ձորերի ջրերը։ Զհասած Բթավիճ (Բթառիջ) գյուղին, բաժանվում է երկու ճյուղի, որոնցից մեկը հոսում է դեպի արևելք և անցնելով Գալառիճ (Գալառիս), Փշկրթաղ (Փրկչաթաղ) թրքական գյուղերի լայնատարած այգիներից, թեքվում է դեպի հարավ, իսկ երկրորդը, որ հոսում է դեպի արևմուտք, անցնում է Բթառիջ գյուղի (հայ և թուրք խառն) այգիներից ու ընդունելով ս. Պողոս-Պետրոս վանքի ջուրը, միանում է Եփրատին։

Ջերմուկի ջուրը։ Շատ հետաքրքիր է այս ջրի ծագումն ու վախճանը։ Լեռան ճիշտ ստորոտից գոմեշի մարմնի երկու հաստությամբ մութ երանգի ջուր է, դուրս է ժայթքում երկրի ընդերքից, ոչ ծագում ունի և ոչ էլ զարգացում, կարծես ստորերկրյա մի մեծ ուժ լույս աշխարհ է մղում այն։ Ջուրը տաք է և հանքային, հոսում է հյուսիսից հարավ և հաղիվ տասնյակ ջրաղացների ջուր հայթայթելով, կրկին չքանում է։

Ջերմուկի ջրից բավական վար, բայց ճիշտ ջերմուկի նման անակնկալ լույս աշխարհ է գալիս մի երկրորդ ջուր, Սև-ջուր անունով։ Սա ևս մութ երանգի ճահճային ջուր է, խոր ու անանցանելի, ոչ-ոք չի համարձակվում մտնել մեջը, որովհետև հատակը տղմոտ է և հոսանքն ուժեղ։ Հաղիվ դուրս եկած, Բղվան գյուղից մի քիչ վար խառնվում է Եփրատի աջ բազուկ Պղտիկ գետին։

Վասկերտի ջուրը, որի գլխավոր ճյուղերից մեկը ծագում է առնում Սբնգոր գյուղի վերևի համանուն լեռան լանջերից, անցնում է ս. Կարապետ վանքի տակից և Յալանչ-Պաղի տակ միանում վանքի աջից հոսող և նույն լեռներից բխող իր երկրորդ թևին, թեքվելով դեպի հարավ-արևմուտք անցնում է Մթնիի, Հայրապետի վարի և վերի ուլանների միջից և Սիրպիհան գյուղի առջև միանում Եփրատին։

Երզնկայից դեպի արևմուտք, Վասկերտից հետո երկրորդ մեծ ջուրը Ուռում-Սեռայի ջուրն է, որը բաղկանում է երեք առանձին ջրերից։ Առաջինն իր ծագումն առնում է Սբնգորի արևմտյան կողերից, իսկ երկրորդ և երրորդ ձորերի ջրերը Աղտաղից հոսելով դեպի հարավ և անցնելով Մելիքթաղ և Խորանթաղ թրքական գյուղերից ու ճեղքելով Երզնկայի հովիտը հյուսիսից հարավ և առանց միանալու արևելյան կողմից եկող Վասկերտի ջրին, նրա միացման տեղից քիչ վար խառնվում են Եփրատին։

Տագում առնելով Զարտախլիի լեռներից ու անցնելով համանուն կիրճից և այդ հոսանքում կոչվելով Զարտախլիի ջուր, Գայլ գետը ընդունում է Աղտաղից եկող մի երկրորդ ջուր՝ Աղկի ջուրը, ապա Վարդանաշահ գյուղի մոտ Կարմիր վանքի ձորի ջուրը, որն իր ծագումն առնում է Գոհանամ լեռան վերին լանջերից և իր մեջ ընդունելով Սեպուհ լեռան հյուսիսային բարձունքներից կազմված երկու ձորերի ջրերը, անցնում է Կյոկեի, Էսքիի և Կարմիր գյուղերից։ Գայլ գետին Թիլ ավանի մոտ միացող չորրորդ ջուրը ս. Շողակաթի ջուրն է, որն իր ծագումն առնում է Սեպուհից, անցնում ս. Շողակաթ վանքից և հոսելով դեպի արևելք, միանում Շոխայի ջրին։ Հինգերորդ ջուրը ս. Հակոբ վանքի ձորինն է, որն իր ծագումն առնում է Գոհանամի արևելյան կողերից, անցնում վանքի առջևից և Սելեկի ստորոտից հոսելով դեպի արևելք, Քյուրտագրակից վեր միանում է Գայլ գետին, իսկ սա՝ Եփրատին։

Կարմիր լեռից, Մարեքի լեռներից, Երեք եղբոր լեռան գագաթներից և Սեպուհի հարավային լանջերից ծագում են առնում չորս ջրեր։ Սրանք Եփրատին են խառնվում՝ Թանաձորի ջուրը անց-

նելով Անի ամրոցի (Ամուրբերդ) վերևից, Կամախի ստորոտում, ս. Լուսավորիչ վանքից եկող և Ավագ վանքի ջրին միացող Սերովբե վանքի ջուրը՝ Վարի Բագառիճի տակ, Մարեգի ջուրը, որը ծագում է առնում համանուն լեռներից և իր մեջ ընդունում երեք վտակ, Մարեղ գյուղի ստորոտում, Բերդերի ձորի ջուրը, որ ծագում է առնում ս. Աստվածածնի մատուռի ստորոտից, հասնում է Բերդերին, միանում Պահարկա ջրին ու հոսելով դեպի Գառնի, ընդունում Բալամատ ձորի ջուրը, Թորգոմա բերդի ստորոտում։

Այսպիսով, Եփրատի երկու թևերը, վերը նշված հոսանքներով կղզիացնելով Դերսիմի, Խոզաթի, Բերիի, Բալուի, Քղիի, Ճապաղջրի, Երզնկայի և Կամախի լեռները, կիրճերն ու լեռնահովիտները, Կապան-Մատենի առջև միանում են իրար։ Ահա սրանք են կազմում Դերսիմի և նրա անմիջական շրջանների լեռնային պատվարները և ջրերի հոսանքները։

ԿԻՐՃԵՐ։ Եփրատն ու Արածանին արևելյան կողմից ունեն երկու մուտքի, արևմտյան կողմից՝ երկու ելքի գլխավոր կիրճեր և չորս զարտուղի կամ միջանկյալ կիրճեր։ Դրանցից առաջինը Սանսայի (Ստնասար) կիրճն է, որը Դերջանը միացնում է Երզնկային և որով աղմկահույզ անցնում է Եփրատը։ Դուրս գալով Երզնկայի արևմտյան հովտից, գետը դեմ է առնում Կամախի ապառաժներին, որոնք բնականից ճեղքված են, ու շուրջ քառասուն կիլոմետրի վրա գետին ճամփա են բացում։ Ուրեմն, առաջինը Սանսայի կիրճն է, համանուն գյուղի մոտ, ուր գետն ընկնում է Երզնկա-Կարին խճուղու ձախ կողմը, իսկ երկրորդը՝ Կամախի ելքի կիրճը։ Մյուսը Զարտախլիի կիրճն է, որ թեև կապ չունի ոչ Եփրատի և ոչ էլ Դերսիմի հետ, բայց դեպի Սև ծովի Կիրասուն նավահանգիստը տանող գլխավոր խճուղին անցնում է այս կիրճով։ Այս կիրճը գտնվում է Երզնկայի հյուսիս-արևմտյան կողմն ընկած Սրնքարի լեռան՝ Ջիմենտաղի միացման և Զարտախլիի լեռների հանդիպակաց Աղտաղի լեռների միջև։ Սկսվում է Աղկե քրդաբնակ գյուղի ստորոտից և երկարում նախ դեպի արևմուտք՝ Կամախի ուղղությամբ, ապա թեքվելով դեպի հյուսիս, օձանման գալարումներով ուղղվում է դեպի Գարատաղի բարձունքները։

Դերսիմի ինքնամփոփ շրջանի արևելյան սահմանի գլխավոր դուռը Տավրոսի լեռնաշղթայի արևելյան ճյուղի և Ճաֆեր-պապա լեռան միջև գտնվող խիստ դժվարանցանելի նեղ անցքն է, որը կոչվում է Տերսիմ-Պողազի։ Այստեղով Արածանին մտնում է Դերսիմի սահմանները։

Քղիի կողմից Դերսիմը արտաքին թշնամիներից պաշտպանողը Կալխաշի կիրճն է։ Տինկ և Պեկթաղտ գյուղերից վեր, անդնդախոր ձորի հոսանքի ուղղությամբ երկարող այս կիրճի մուտքի և ելքի դռները դյուրավ պաշտպանելի են։

Համանման կիրճեր գոյություն ունեն Բոլոմորիից Խոզաթ, Զմշկածաղից Երզնկա, Ղըղըլքիլիսեից Բալու տարածվող լեռնաշխարհում։

Համեմատաբար նվազ նշանակություն ունեն Հալվորիի ս. Կարապետ վանքի, Հողաջուրի, Սաղմանի, Իքձորի, Խաչի-Բահի, Տերե-արեանի (Ջաղարջների ձորի), Սարո և Սիմ կիրճերը։

Ամենակարևորներից է Խութաց-ձորը (Գութուաերեսի), որը հարավից ձգվում է դեպի հյուսիս և թույլ չի տալիս, որ Խարբերդից կամ Երզնկայից անցնեն Դերսիմի սահմանները։ Սա համարվում է Դերսիմի ինքնապաշտպանության գլխավոր պատնեշը։ Այս կիրճի նախադուռը Իքձոր գյուղն է, իսկ երկու կողմից կիրճը շրջապատող ամենաբարձր գագաթներն են՝ Պազր (3300 մ), Գարաճա Գալե (3100 մ), Պաքուր (3150 մ) և Հել (3200 մ)։ Կիրճը ձգվում է մինչև Մազկերտի և Ղըղըլքիլիսեի մոտերը։ Անանցանելի այս ժայռերի մեջ մեծ ճիգերով փորված շատ նեղ արահետով միայն հետիոտն մարդը կարող էր անցնել։ Վարը անդնդախոր ձորն է, վերը՝ երկնասլաց ապառաժներ, արահետը գոտիի նման ժապավինաձև երկարում է ապառաժների սրտից, առանց աջ կամ ձախ թեքվելու։ Ամեն ճամփորդի տրված չէր կյանքը վտանգելու գնով անցնել այս կիրճով։ Բարեբախտաբար, տեղ-տեղ, արահետի երկայնքին, խորություններ էին փորված՝ ճանապարհ տալու համար, այլապես երկու հոգի քով-քովի և կամ՝ դիմացից եկողը, առանց այդ փորվածքից օգտվելու, անկարող էին անցնել։ Կիրճի երկու եզերքի ապառաժների մեջ կային արհեստական քարայրներ, գետնուղիներ, շտեմարաններ, մեկը մյուսին կապող անցքեր և սենյակներ, նաև մեծ տապանաքարերով գերեզմաններ։ Քարայրներն օգտագործում էին որպես զինապահեստ և սննդեղենի մթերանոց, այդտեղ պահում էին նաև անասուններ։ Կենտրոնական քարայրներից մեկի մեջ կար տաք ջրի ակ և քարափոր ավազան։ Տաք ջուրը, որը դուրս էր ժայթքում մոխրագույն մի ապառաժի կրծքից, լցվում էր ուղղակի ավազանի մեջ, ապա քարափոր մի խողովակով ժայռերից վար թափվում։

Տաք ջրի ավազանի քարայրից հազիվ 50 մետր հեռավորության վրա կային և պաղ աղբյուրի ակեր, որոնք դուրս էին ցայտում կարմրագույն և վարդագույն ժայռերի կրծքից և միանալով իրար,

մի փսբրիկ գնաակ կազմում ու մի ժայռի բարձունքից, ավելի քան 1500 մետր բարձրությունից, թափվում ներքևի ժայռերի վրա։

Արևմտյան լեռնաշխարհի պաշտպանության երկրորդ մեծ կիրճը կոչվում էր Ներտիվեն։ Սա ևս անառիկ և դժվարանցանելի էր, թեև նախորդի չափ երկար չէր, բայց տեղ-տեղ մյուսից ավելի անմատչելի ապառաժներով էր շրջապատված։ Նույնպես ուներ ժայռերի մեջ փորված մի նեղ արահետ, որը կանգ էր առնում հսկա ապառաժի առջև և արգելակում վերելքը։ Հնարավոր չէր աջ կամ ձախ շարժվել, անդունդին նայելն անգամ մարդու սարսափ էր պատճառում և սակայն գարեր առաջ այս կարճ ճամփան օգտագործելու և հաղորդակցության գիծը Խարբերդի ու Երզնկայի, ի մասնավորի Տրապիզոնի հետ պահելու համար, հսկայանիստ և բարձրադիր այս ժայռի վրա հարյուր աստիճան սանդուղք են փորել։ Քարափոր աստիճաններով ժայռի կատարը հասնելուց հետո, քարափոր արահետը նույն ձևով շարունակվում էր։ Ամենահետաքրքիրը կիրճի երկու կողմի ժայռերի մեջ փորված բնակարաններն էին։ Սրանք այլևս անձավ, քարանձավ կամ քարայր չէին, այլ ուղղակի բնակարաններ, կենտրոնում՝ մեծ սրահ հարակից սենյակներով, շտեմարանով և նույնիսկ անասունների գոմերով ու ախոռներով։ Դրանց կառուցվածքից և դասավորումից դատելով, բազմամարդ ընտանիքներ բնակած լինելու են ամեն մի բնակարանի մեջ։ Սենյակներից ոմանք նկարազարդված էին քարափոր նկարներով՝ գեղակերտ ծաղիկներ, զանազան ձևի խաչեր, պատերի, նույնիսկ առաստաղների վրա բնանկարներ։ Հարյուրից ավելի այս բնակարանների կենտրոնում գտնվում էր ավելի մեծ և ընդարձակածավալ մի բնակարան, որն իր մեծությամբ և նկարների շքեղությամբ զանազանվում էր մյուսներից։ Սրա սրահի պատերին կային ուղղահայաց փորագրված անծանոթ տառերով գրություններ, որոնք տառ լինելուց ավելի, խաչի նմանող նշանագրերի և կամ զանազան ձևի գծերի էին նմանվում։ Այս գրությունները շրջակապված էին ծաղկանկարներով։ Ամեն տուն ուներ ժայռերից դուրս ժայթքող ցայտաղբյուրներ, որոնք գտնվում էին միջանցքի նմանվող գետնուղիների մեջ։ Տնից-տուն հաղորդակցության կապը պահված էր գետնուղիներով։ Ամենաուշագրավը, սակայն, առանձին ժայռերի մեջ փորված գերեզմանների և նրանց վրա դրված տապանաքարերի երկարությունն ու լայնությունն էր։ Տապանաքարերից մի քանիսի վրա տեսնվում էին մեծ սրահի պատերին փորագրված արձանագրությունների նման գրություններ՝ վերից վար ուղղահայաց ձևով։

Աշիրեթները որպես պահեստ և տեղ-տեղ էլ որպես բնակարան էին օգտագործում քարափոր այս տները, որոնցից ամեն մեկն ինքնապաշտպանության մարտկոցներ և կամ անառիկ բերդեր էին։

Ալի-պողազի կիրճը գտնվում էր Ջմշկածագի սահմաններում։ Այն թեև շատ երկար չէր, սակայն շատ վտանգավոր էր։ Այստեղ ևս կային քարայրներ, արհեստական քարափոր սենյակներ և այլն, միայն այն տարբերությամբ, որ այս քարայրների մեջ ջրի ակերն ավելի շատ էին։

ՀԱՆՔԵՐ։ Դերսիմը երկրաբանական առումով հետազոտված չէ, բայց և այնպես մասնակի պրոսպեկտումներով, բյուզանդական ժամանակաշրջանից մնացած մի քանի հանքերի գոյությամբ և ժողովրդի մեջ ավանդաբար գործածված բուժիչ ջրերի ակերից և աղբյուրներից դատելով, կարելի է եզրակացնել, որ այս շրջանը հանքային շատ մեծ հարստություններ ունի։

Ապառ բերդաքաղաքի վերև գտնվող մեծ քարայրը, որ բյուզանդացիների կողմից օգտագործված մի հանքահոր էր, մնում էր անօգտագործելի։

Ասվեց, որ մասնակի հետազոտություններ կատարված են անհատների կողմից։ Այսպես, 1912 թ. Տուժիկ-պապայի լերկ ապառաժներից ժայթքող ջրառատ մի ակի ավազի քննությամբ հաստատվեց, թե լեռը պարունակում է շատ հարուստ ոսկեհանք։ Ոսկեհանքի հարուստ պաշարներ ունեն Պալապանի շրջանի Խնձորեկ գյուղի սարերից վերև գտնվող Կարմիր լեռը և գյուղի արևելյան կողմի Թամքար (կամ Թամքրա) լեռից բխող Հալճից աղբյուրը, որը նույնպես քննությամբ հաստատված է (1914-ին)։

Դերսիմի մի շարք գյուղերում նախնական միջոցներով ստանում էին կապարի նմանվող մի հանք, որը շատ հարուստ էր և ավելի կարծր, քան կապարը և որից պատրաստում էին զանազան զենքերի փամփուշտների միջուկները։

Դերսիմը հարուստ է ոսկու, արծաթի, պղնձի, երկաթի, ցինկի, բորակի, կապարի, քարյուղի (նավթի), ծծմբի, աղի հանքերով և հանքաջրերով։ Այսպես, Հալվորի գյուղից վերև, ս. Կարապետ վանքի թիկունքին, գտնվում են ոսկու և արծաթի հանքեր, որոնք օգտագործվել են անցյալում և որոնց հորերը մնում էին անվթար։ Տեղացիները երբեմն նախնական միջոցներով (փքոց) հալեցնում էին այն և վաճառում։ Տուժիկ-պապան հարուստ է ոսկով, արծաթով, երկաթով և կապարով, Սուրբ-լուսա լեռան կողերը՝ կապարի, արճճի և

քարածուխի հանքերով։ Պալապանի շրջանի լեռներից Հայտարի-սարը և Թամքարը քարածխի շտեմարաններ են, Կարմիր լեռը հարուստ է ոսկով։ Դերջանի հովիտը քարյուղի առատ աղբյուրներ ունի, մինչև 1912 թ. Դերջանի ժողովուրդն իր քարյուղի կարիքը հոգում էր Մանձի և Ապրանքի առջև գտնվող, բայց չզտված քարյուղի լճերից, որոնք Բուրք կառավարության կողմից փոխանակ շահագործվելու, սնդիկի և այլ քիմիական բաղադրությունների միջոցով ոչնչացվեցին։

Սրբնգոր լեռան արևմտյան կողմը, Կամախի մոտերքը կային քարածխի հարուստ հանքեր, որոնք միակ օգտագործվողն էին դեռևս հռոմեական ժամանակներից, սակայն նախնական ձևերով։

Քղիի արևելյան սարերից մինչև Կամախի աղահանքի աղբյուրները, ավելի քան 170 կմ տարածությամբ, լեռների ընդերքից բխող աղբյուրներն իրենց հետ դուրս էին բերում աղի առատ պաշար, տեղ-տեղ գոյանում էին աղջրի ձորեր, որոնք նույնպես չէին օգտագործվում։ Պետության և մասնավորների կողմից օգտագործված աղահանքերը հետևյալներն էին՝ Դերսիմի կենտրոնում, Լերթիկ գյուղի ստորոտում գտնվողը։ Նախնական ձևով պատրաստված մոտավորապես 50 ավազանի մեջ հոսում էին աղաջրի աղբյուրներ և արևի ջերմությամբ քարանում։ Շրջակա բոլոր գյուղերը օգտվում էին այս աղահանքից, ամեն գյուղ ուներ իր ավազանները և համագործակցական ձևով հավաքում էին աղը։ Աղի բաժանումը կատարվում էր աշխատանքային օրվա հաշվով։ Մյուսն Աղայե-Շենլիկի աղահանքն էր, որն օգտագործվում էր Շահ Հյուսեին փաշայի ժառանգորդների կողմից։ Այս աղահանքն իր ջրերի առատությամբ ամենամեծն էր։ Երրորդը ս. Սարգսի անվանը նվիրված, հանրային սեփականություն նկատվող Խզր-Թուղլան աղահանքն էր, որը գտնվում էր Քղիի շրջանում։ Վենետիկ-Թուղլան աղահանքը գտնվում էր կառավարության հովանավորության տակ, սակայն այս շրջանների աղաջրերի առատության պատճառով կարելի չէր լինում այն լայն չափերով օգտագործել։ Հինգերորդը Աղայե-Շենլիկից դեպի արևելք, Քղիի և Դերջանի միջև ընկած Աղամբարի (կամ Աղաձորի) ավազաններն էին։ Աղի ջրի այս գետակն ավելի քան 30 կմ երկարության վրա աղ էր բաժանում այդ շրջանի ժողովրդին։ Աղաներ, փաշաներ, բեկեր թեև տեղ-տեղ ավազաններ էին շինել և փորձել էին աղը սեփականացնել, սակայն որևէ արդյունքի չէին հասել։ Ջրերի առատությունը և փոխադրական միջոցների պակասը պատճառ էին եղել, որ ոչ ոք չկարողանար շահագործել անսպառ հանքային այս հարստությունը։ Աղի առատ աղբյուրներ կային Բոլոմորիի մեջ, Դերջանի Վարդենիկ գյուղի մոտ, որոնք օգտագործվում էին պետության կողմից։ Հայտնի էին նաև Ավզերտ լեռան ստորոտում, մի բարձր լեռնադաշտի վրա գտնվող Թլակ գյուղի աղաջրերը, որոնք այս շրջանի բոլոր ավազաններից ամենահասութաբերն էին և օգտագործվում էին Թլակցի Զուխատար-զատեների կողմից, որպես սեփականություն։ Պալապանի շրջանի գյուղերը մինչև Սանասյի կիրճը, Թլակից էին հայթայթում իրենց աղի պահանջը։ Աղը փոխադրում էին մազե խուրջիններով, որոնք բեռնում էին էշերին կամ ջորիներին և կամ կրում շալակով, նայած գյուղի դիրքին և արահետի հարմարությանը։ Մեծկերտի և Զարսանջակի աղի աղբյուրները և ավազանները պատկանում էին սիսանցիների աշիրեթապետ Հայտար աղային և իր եղբայր Հյուսեին բեկին։ Այս աղբյուրների աղը օգտագործվում էր Դերսիմի այն գյուղերի կողմից, որոնք հեռու էին գտնվում աղաջրերի շրջանից։ Շահագործող քուրդ աղաները ոչ մեկ սակ չէին վճարում կառավարությանը. ջուրը՝ բնական, հանքը՝ սեփական, արտադրի՞ր ու վաճառի՞ր։ Այսուհանդերձ, բոլոր աղահանքերից ամենակազմակերպվածն ու հասութաբերը Կամախի աղաջրերի ավազաններն էին։ Կամախի Դոմեր և Թրմսի գյուղերի ավելի քան վեցհարյուր ավազանների կառույցի, կազմակերպության և վարչական աշխատանքների դասավորումը Ոսկան էֆ. Մարտիկյանի ստեղծագործական ոգու արդյունքն էր։ Կամախի աղը մեծ հասույթ էր ապահովում պետությանը, բավարարելով ոչ միայն Կամախի շրջանի աղի պահանջը, այլև ուղարկվելով Ակն, Արաբկիր, Արմտան և մինչև Երզընկա։

Ուռում Սերայի մոտերքն էր գտնվում Սպիտակ մարմարի հանքը, որը գրեթե անօգտագործելի էր, սակայն հայտնի էր վաղեմի ժամանակներից՝ մի շարք մեհյանների քարերից կարելի է հետևցնել, թե այս քարհանքը աշխատեցվել է։ Որոշ մզկիթների ու բաղնիքների քարերը ևս այդ քարհանքից էին բերված։

ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ։ Դերսիմցին հանքային ջրերի բուժիչ հատկությունը վերագրում էր սրբերի կամ փիրերի կարողությանը։ Ամեն մի հանքային ջուր ուներ իր «սուրբը» (փիրը). օրինակ. Դերսիմից դեպի Կարին գնացող ճամփու վրա գտնվում էր մի մեծ հանքային ջուր, որը բխում էր Հելլեն (Հելլենք) գյուղի ստորոտից և դարմանում էր ամենա-

զորավոր իշյաղը։ Ջուրը ժայթքում էր ժայռի միջից և ինքնաբերաբար լճանում։ Այդտեղ էր, որ հիվանդները լողանում էին և մինչև իրենց դարմանվելը բնակվում Հելլեն գյուղում։

Ոչ միայն Դերսիմի, այլ առհասարակ մոտավոր կամ հեռավոր շրջանների մեջ գոյություն չունեին կազմակերպված կամ կառուցված լոգարաններ, բոլոր հանքային ջրերը գտնվում էին բնական վիճակում, բացօթյա և անապաստան։

Մյուս «սուրբը», որ ամենաղորավորն էր և ամենաջրառատը, հոդացավի բժշկության ջուրն էր, որը գտնվում էր Բերկրիի ստորոտում, մի խորը ձորի մեջ։ Շատ տաք էր և առատ, կարելի էր ձուն խաշել։ Օգտագործվում էր կա՛մ պատահական անցորդների և կա՛մ տեղացիների կողմից։ Իր բուժիչ հատկությունը վերագրում էին հոդացավի «սրբին», որը բնակություն էր հաստատել այդ ջրի մեջ և դարմանում էր իր զորությանը հավատացող հիվանդներին։

Բողվանքի ստորոտում գտնվող հանքային ջուրը շատ պաղ և դառնահամ էր։ Օգտագործվում էր որպես լուծողական. մի բաժակը բավական էր, որ լուծեր ստամոքսի պնդությունը։ Կոչվում էր նաև փորի ցավի և դողի աղբյուր։ Դողցնողին (ջերմ) մերկացնում էին ու լողացնում աղբյուրի պաղ ջրով, և զարմանալիորեն ջերմը բուժվում էր։

Օսնակ գյուղի վերևը, ս. Կիրակոս վանքի ստորոտում գտնվող հանքային ջուրը հին դարերից մնացած մի ավազան էր, որին Լիճ անունն էին տալիս։ Հակառակ նրան, որ հոդացավի և մեջքի ու թևերի դարմանումը տաք ջրերին էր վերագրվում, այստեղ սառը ջուրն էր, որ դարմանում էր նույնիսկ հնացած հիվանդությունը։

Ապուհայաթի մեծ ակը կենաց կամ անմահության ջուր էր կոչվում։ Գտնվում է Ղըզըլքիլիսեի եկեղեցու պարտեզում։ Գլխավոր հատկությունն այն էր, որ կերածդ արագ կերպով մարսեցնում էր։ Սրա մոտ ապրողները և միշտ նույն ջուրը խմողները կշտանալ չգիտեին և առհասարակ հարյուր տարուց ավելի էին ապրում։ Ըստ քրդերի հավաստիացումների, Ապուհայաթը օգնում էր սերնդագործության և սեռական հարաբերությունների ուժեղացմանը։ Շատ տարիքավորներ միշտ ուխտի էին գնում այս եկեղեցին (որ կանգուն էր) և մատաղ մորթում անմահական այս աղբյուրի առջև ու օրերով մնում Ապուհայաթի ջուրը խմելու և երիտասարդանալու համար։

Սուրբ-լույս լեռան ձյունածածկ գագաթներից վար, մի անանուն բերդի ավերակների ստորոտում Քանիի (քրդերեն՝ աղբյուր) անմահությունն էր։ Հանքային այս ջուրն էլ Ղըզըլքիլիսեի աղբյուրի հատկություններն ուներ։

Մյուսը արձանագործ ակն էր։ Այս ջուրը, որ գտնվում էր Պալապանի լեռների սրտի վրա թառած Խնձորեկ գյուղի արևմտյան կողմը, Լեռնակա ձորը Բերդերի ձորին միանալու տեղից քիչ բարձր. տարօրինակ հատկություն ուներ՝ քանի դեռ գետնի մեջ էր և շփում չուներ օդի հետ, սովորական հեղուկ էր, ավելի ճիշտը՝ գլգլան պաղ աղբյուր, բայց հաղիվ թե շփվում էր օդի հետ, գույնը փոխվում և աստիճանաբար քարանում էր։ Ցերեկներն արևի շողերի տակ կարելի էր տեսնել այս փոքրիկ աղբյուրի հրաշագործությունները, նայած օդի հոսանքին, այն աջ ու ձախ քանդակներ էր կերտում, մի տեղ խաղողի մեծ ողկույզի ձև էր առնում, մի ուրիշ օր էլ՝ եղջերուի իրական կերպար, վերջապես ամեն օր նոր ձևի և նոր տեսակի ստեղծագործություն՝ մարդկային դիմանկար, կենդանական աշխարհի զանազան կերպարներ։ Ամեն տուն առատորեն օգտագործում էր արձանագործ աղբյուրի կողմից բնականորեն կերտված զարդերը, որոնք նախնական շրջանում գաջի գույն էին ունենում, բայց ժամանակի ընթացքում այնքան էին կարծրանում և գունափոխվում, որ մարմարի գույն և տոկունություն էին ստանում։ Իր ակից մինչև ձորափը հաղիվ 15 մետր բարձրություն ուներ, մարդիկ հաճախ կոտրում էին դեռ չկարծրացած քարերը կամ ծաղիկները և ճամփա բանում արձանագործ աղբյուրին, որպեսզի շարունակի ազատության մեջ ստեղծագործել։

Նույն գյուղի հյուսիս-արևելյան կողմից՝ Հայտարիի սարերից քիչ վար, մի ժայռի մեջտեղից դուրս էր ցայտում թթու աղբյուրի ջուրը, այնքան թթու, որ կարելի չէր խմել առանց պարզ ջրի խառնուրդի։ Շաքարով խառնվելու պարագային կիտրոնով պատրաստված օշարակի համ էր ունենում։ Ուներ մարսողական հատկություն և օգտագործվում էր փորացավի, աղիքների բորբոքման կամ լուծը դադարեցնելու համար։ Ջուրը բաց գեղին գույնի էր և դաղձի հոտ ուներ։

Նույն գյուղի արևմտյան կողմը, Բերգրա սարի ստորոտում էր գտնվում դառնահամ մի պաղ ջուր, կարելի չէր խմել, ծանր հոտ ուներ և շատ լեղի էր, և սակայն ջերմից տառապողների միակ ապավենն էր՝ հիվանդին մերկացնում էին և մերկ մարմնին թափում այս դառնահամ ջրից։ Երեխան կամ մարդը, որ այդ ջրի լոգանքն առնելուց հետո դժվարու-

2—61

թյամբ մի երկու ումպ նույն ջրից խմում էր, արդեն բժշկված էր լինում։

Եփրատ գետի աջ ափին, կենտրոնական խճուղուց 15—20 մետր հեռավորության վրա, թրքական Գալառիճ (Գալառիս) գյուղի ստորոտում էր գտնվում բորոտների բնականից ստեղծագործված անհատակ լիճը։ Անհատակ անունն էր կրում, որովհետև շատ խորն էր և այնտեղ մտնող որևէ անասուն (ձի, գոմեշ կամ կով) կորչում էր անմիջապես։ Լիճը փոքր էր, կենտրոնից գրկաչափ մի դեղին ջուր երկու մետրից ավելի վեր էր ցայտում ճիշտ արհեստական ցայտաղբյուրի նման, և սակայն ջուրը լճից դուրս չէր հոսում, մնում էր իր տեղն ու, հակառակ այդքան առատ ցայտմանը, ո՛չ ավելանում և ո՛չ էլ պակասում էր։ Զմեռվա սաստիկ ցրտերին լիճը չէր սառչում, ցայտաղբյուրը շարունակում էր նույն ձևով գլթգլթալ և գոլորշիանալ։ Շատ զորավոր ծծմբահանքային այս ջուրը, ասվում էր, ժամանակին օգտագործվել է բյուզանդացիների կողմից։ Նրա զորավոր ծծումբի հոտից խույս էին տալիս անասուններն ու թռչունները և սակայն նկատված էր, որ որսորդից խփված ու վիրավորված թռչուններն իրենք իրենց վերքը լվանում էին այս ջրով և դարմանվում։ Քոսոտած այծերը, բորոտած մարդիկ մի պարանով կախվում էին այս ավազանի մեջ մինչև վիզը, մնում մոտավորապես կես ժամ ու երբ դուրս էին հանվում ջրից, մարմինը դեղնած, բայց վերքի կոշկոռները թափված ու հիվանդությունը դարմանված էր արդեն։

Մնձուր լեռան ստորոտում գտնվող, Ճանճիկե գյուղի մոտից անցնող Գոմու-ջուրը ավելի առատ էր և ավելի ուշ էր քարանում, քան վերը նշված արձանագործ աղբյուրը։ Սա արձաններ չէր ստեղծում և չէր քարանում, երբ հոսում էր, սակայն երբ այն լցնում էին ավազանների մեջ, արևի ճառագայթների ազդեցության տակ շոգիանում էր և ավազանների հատակին մնում էին 50—60 սմ հաստությամբ քարասալեր, որոնք սկզբնական շրջանում շատ կակուղ էին լինում ու կարելի էր սղոցել, տաշել և ամեն տեսակ փորագրություններ կատարել, իսկ հետո, ժամանակի ընթացքում, այնքան կարծրանում էին, որ դժվարությամբ էին տաշվում։ Մաթգեղի եկեղեցին իր բոլոր զարդարանքներով այս ջրաքարից էր կառուցված և հարյուրավոր տարիներ ի վեր պահպանում էր իր գոյությունը։

Թվարկած հանքաջրերի մեջ ամենամեծը և ամենաջրառատը Թթու ջուրն էր, որին տեղացիք Պեռկերտ անունն էին տալիս։ Այս ջուրը դարեր առաջ օգտագործվել էր հռոմեացիների կողմից։ Ջրի ակը գտնվում էր Ճիմին (Ճեմքիմ) Թրքական գյուղի ստորոտում, շատ թթու էր, խմելու ժամանակ ծծումբի զորավոր հոտ էր առնվում։ Մի բաժակ կարելի էր խմել ուղղակի ակից, շատ մարսողական էր։ Ամռանը առանձին մարդիկ լավ խցանված շշերով Երգնկա էին տանում և որպես զորավոր սողա՝ վաճառում։

Ջափավոր տաք ջրի երկու ակունք կար, առաջինը՝ Ջագրման գյուղի ստորոտում, երկրորդը՝ Գալառիճի (Գալառիս) մոտերը։ Հանքային այս ջրերի վրա կառուցված բաղնիսների հետքեր կային։ Ժամանակին, դարեր առաջ, հանքային այս ջրերը օգտագործվել են, որովհետև այստեղ ու այնտեղ թաղված քարերի վրա մի քանի կտոր արձանագրություն կար, ծաղկազարդված գրերի նման, բայց անհասկանալի։ Վենետիկցի Մարկո-Պոլոյի վկայությամբ ԺԳ դարուն ամենատաք ջերմուկային բաղնիսները գտնվելիս են եղել վերը նշված հանքաջրերի տեղը։ Գալառիճի ստորոտը գտնվող Իլիճեն ջերմուկի ջուրն ուներ մեծ ավազան, առանց պատի և ծածկի, անխնամ, ջուրը ֆոսֆորային էր։

Դերսիմի հանքային ջրերը հազարների էին հասնում և հնարավոր չէ բոլորը թվարկել։ Ընդհանուր առմամբ Տուժիկ-պապայից մինչև Կամախի Ջարաախլիի լեռները և Քղիի Կարմիր լեռան գագաթներից մինչև Սեպուհ լեռան ծերպերը ամեն տեսակ հանքերի և հանքային ջրերի շտեմարաններ կային։ Այսպես, Ջագրմանի տաք ջրի մոտից մինչև Քյարթաղ (Քարթաղ) շատ կարճ տարածության վրա, մեկը մյուսին հակոտնյա բնույթով և հատկություններով հարյուրավոր հանքային ջրերի աղբյուրներ կային։ Մարդ զարմանում էր, երբ շատ տաք ջրի ակից տասը քայլ հեռավորության վրա հանդիպում էր շատ սառնորակ մի ակի։ Մի տեղ պաղ, քովը տաք, մի տեղ աղի, մոտը լեղի կամ թթու, մեկը՝ հանդարտ հոսող, երկրորդը՝ ցայտաղբյուրի նման վեր ժայթքող, երրորդը՝ մի ժայռի կրծքից դուրս պոռթկող։

Շատ տարօրինակ մի հանքային շրջան, նույնքան և հետաքրքիր, գտնվում էր Եփրատ գետի վրա ձգված Մրթիի կամուրջի դիմացը, Խալիլ աղայի խանի և Ջորբերնա խանի շրջանի միջև ընկած տարածության վրա։ Կենտրոնական ճամփու ստորոտում գտնվող այդ հողամասին կարելի էր տալ հանքաճահիճ անունը, որովհետև ամբողջ տարածությունը հանքաղբյուրների ակերով էր ծածկված։ Ճամփորդը գեռ կես ժամ հեռվից հասկանում էր, որ մոտեցած է հոտերի սահմանին։

Քարյուղի, ծծումբի և մեղ անծանոթ այլ հոտերի ազդեցությունը բռնած էր ամբողջ տարածությունը, մարդ կարող էր մտածել, թե եթե մի օր դատապարտված լինի ապրել ու շնչել այդ զորավոր հոտերը, հավանաբար շնչահեղձ կլինի, որովհետև գազային արտաշնչումի այդ շրջանում տեղ կար, ուր աչքերը կարցունքոտվեին, տեղ-տեղ էլ մարդ հարկադրաբար կփոնքտար և կամ թաշկինակով բերանը կփակեր, որ չշնչեր ու չհազար։ Իրար հակամետ այդ հանքաջրերի ազդու հոտի պատճառով մարդ չէր համարձակվում մոտենալ ակերի շրջանին, շտապում էր արագ անցնելու հոտած այդ շրջանից, որին թուրքերը Խոխմուշլար անունն էին ավել։

ԱՄՐՈՑՆԵՐ։ Դերսիմում կային պատմական արժեք ներկայացնող հնագույն մի շարք բերդերի ու ամրոցների ավերակներ, ինչպես նաև կանգուն կոթողներ, որոնցից նշանավոր էր հատկապես Երզնկայի բերդը, որը մինչև վերջերս էլ թուրքական չորրորդ բանակի կողմից օգտագործվում էր որպես զորանոց և զինարան։ Այս բերդը գտնվում էր քաղաքից արևելք, Կարինի ճանապարհին և ժամանակին քաղաքի պաշտպանության գլխավոր ամրոցն էր եղել։

Բերդը կառուցված էր կոփածո քարերով։ Քարուկիր (քեվկիր) հիմքերը շատ խոր էին, շրջափակված էր երեք մեծ պարսպով, որոնց բարձրությունը մոտ 30, իսկ լայնքը՝ վեցից ութ ոտք էր։ Արտաքին պարիսպը դրսի կողմից պաշտպանված էր լայն ու խոր խրամներով, ուր հատուկ ջրմուղներից հորդառատ ջուրը լցվում էր խրամների մեջ, որով ամրոցը կղզիանում ու դառնում էր անմատչելի։ Պարիսպների վրա, տասնական քայլ հեռավորությամբ, կառուցված էին բուրդեր ու մարտկոցներ։ Աշտարակները քայքայված էին, բայց պարիսպները մնում էին կանգուն։ Բերդն ուներ հաստ երկաթներով ամրացված մեծ դուռ, որի աջ և ձախ կողմի աշտարակները ևս կանգուն էին։ Դռան վերևը զետեղված էր մի մեծ թնդանոթ, որը օգտագործվում էր ծոմապահության (ռամազան), բայրամի ժամանակ և կամ տարբեր ուրախառիթ լուրեր ամբողջ քաղաքին ծանուցելու համար։

Պարիսպների շրջափակոցի ներսը կատարյալ բերդաքաղաքի նման էր՝ մարզանքի, փորձերի հատուկ հրապարակներ, զինվորական արհեստանոցներ, պահեստանոցներ և զորանոցներ էին տեղավորված այդտեղ։

Բերդի շինության մասին որևէ արձանագրություն չկար, միայն թե XIV դարի աշխարհագիր Մուսթաֆյան վկայում է, թե այն կառուցվել է Իկոնիայի Ալայեդդին Քեյոպատ սուլթանի կողմից, սակայն չի նշում թվականը։

Մյուս բերդը գտնվում էր Երզնկայի արևելյան կողմը։ Սանսայի կիրճի ուղղությամբ դեպի Դերսիմ նայող և Երզնկա-Կարին խճուղին իր պաշտպանության տակ պահող Բեռդար (Բերդեր) լեռան մեջ, Խնձորեկի հին գյուղատեղից մի ժամ, նորից հազիվ քսան րոպե հեռու։ Ամբողջ լեռը փորված և այդ ընդարձակ պարապության մեջ բերդեր էին շինված։ Լեռը ամբողջությամբ դատարկ լինելու ապացույցն այն էր, որ լեռան որևէ մասում գեանին հարվածելիս թնդյուն էր ելնում, որպես արձագանք ընդերքի դատարկության։

Բերդի կամ բերդերի դուռը գտնվում էր նույն լեռան արևմտյան կողմը, Բերդրա ձորի վրա։ Այս մասին գրավոր միակ տեղեկությունը գտնվում էր հայտնի հասարակական գործիչ, Խնձորեկ գյուղացի Միլլեթպաշի Խաչիկ աղայի (Խաչիկ Մինասյան) մոտ պահվող մի ավանդական արձանագրության մեջ, ըստ որի, ժամանակին, երկրաշարժի և կամ լեռնային տեղաշարժի հետևանքով, հանդիպակաց Սևքարի լեռներից մի լեռնաշերտ է պոկվել և ընկել բերդի վրա, փակելով նրա ելքի ու մուտքի անցքերը։ Իսկ մեծ պապիս պապը՝ Թոբիկը, մի ձեռագիր աղոթագրքի կողին արձանագրել էր մի այլ ավանդություն՝ իբր թե բերդի զանազան բաժանումների մեջ պահված են հսկայական գանձեր և մագաղաթե հիշատակարաններ։

Դերջանի Դիվնիկ հայաբնակ և Պալապանի Զուրեն (Սուրեն) քրդաբնակ գյուղերի միջև, Սպիտակ քարերի ու ամառանոցների արևելյան կողմը, Կեիկ-կոլ լճի վրա բարձրանում էր Մլբերդը (Մեռբերդ), ծովի մակերեսից մոտ 3000 մետր բարձրության վրա։ Դրսից դիտողին թվում էր, թե դա անմատչելի ապառաժների մի ժայռակույտ է։

Բերդը իշխում էր՝ արևելքից Դերջանի, հարավից Սանսայի կիրճերին, արևմուտքից Կարինի խճուղուն, իսկ հյուսիսից Պալապանի և Գուրեշանի լեռնաշարերին։ Կառուցված լինելով լեռնագագաթներից պաշտպանված և լեռնադաշտի ճիշտ մեջտեղից վեր բարձրացող ամենաբարձր գագաթի վրա, բնականորեն գերիշխող դիրք էր գրավել։ Ոչ ոքի մտքից չէր անցնում մոտենալ վայրի գազանների այդ որջին և ոչ էլ մտածել, թե ժամանակին այդտեղ մեծ բերդ է եղել։ Մինչդեռ լայնանիստ պարիսպների փլատակները, աշտարակների կիսաքանդ մնացորդները և կիսակործան ամրությունները, բոլորն էլ շինված, տաշված և

հղկված մեծ քարերով, արահետները, ստորերկրյա ներքնուղիների հայտարար նշանները, որոնք ժամանակի ընթացքին լցվել էին քարով և ավազով, կասկածի տեղ չէին թողնում։

Երբ և ում կողմից է կառուցվել այս բերդը, կամ երբ և ում կողմից կործանվել, ոչ ոք չգիտեր։ Նույնիսկ շատերին անծանոթ էր բերդի գոյությունը։

Քղիից հյուսիս-արևելք, դեպի Կարին նայող Կարմիր լեռան անմատչելի ծերպերին էր թառած կիսակործան Կարմիր բերդը (Ղըզըլ-ղալե), որն իշխում էր Դերսիմի հյուսիս-արևելյան շրջանին։ Սրա ավերակների տեղանքից և մնացորդներից կարելի էր հետևցնել, թե ժամանակին մեծ և զորավոր մի բերդ է եղել։ Արտաքին պարսպի պատերը շատ լայն էին, տեղ-տեղ աշտարակների հիմքերը մնացել էին անվթար։

Ավանդաբար պատմվում էր, թե այս բերդը ստորերկրյա ուղիներով հաղորդակցության մեջ է եղել մոտակա վանքերի և գյուղերի հետ։

Քղիից հարավ-արևելք, Միանձում լեռան վրա, քարայրից դեպի աջ ընկած բարձունքին էին գտնվում Ապառ բերդաքաղաքի ավերակները։ Այս բերդաքաղաքը ճանաչված էր որպես Դերսիմի արևելյան պաշտպանության ամրոց։ Սրա երբեմնի հզորության վկաներն էին բերդի հաղորդակցության միջոցները, ստորերկրյա գետնուղիները (որոնցով կապ էին պահել Աստղաբերդի հետ), ջրմուղները, եկեղեցիների և ամրոցների փլատակները։

Ավանդաբար պատմվում էր, թե Ապառը համառ դիմադրություն է ցույց տվել բյուզանդացիների արշավանքներին և Մանանաղիքը պաշարած թշնամուն։

Ապառն ուներ մի մեծ գերեզմանոց, առատ ջուր, խիտ անտառներ և անմատչելի դիրք։

Աստղաբերդ գյուղի և Աստղաբերդ լեռան անտառածածկ լեռնադաշտի գեղատեսիլ բարձունքին, ճիշտ ս. Կիրակոս վանքի ստորոտում էին գտնվում Աստղաբերդի ավերակները։

Աստղաբերդը ժամանակին Դերսիմի արևելյան կողմի պաշտպանության պատնեշն է եղել։ Ավերակների մնացորդները՝ պարսպի լայնքն ու երկայնքը, պատերի հաստությունը, պաշտպանական ամրոցների դիրքը և Ապառի հետ ունեցած հաղորդակցության միջոցները գալիս էին վկայելու, թե այս բերդն էլ մյուսների կարգին աչքառու դեր է խաղացել ինքնապաշտպանության պարագաներում։

Աստղաբերդի վերևից հոսող Օրորի ջրի հանկարծակի անհետանալը տեղացիները ավանդաբար վերագրում էին վիշապին՝ իբր թե վիշապն է, որ ջրի հոսանքը խափանել և ուղղությունը փոխել է։ Մինչդեռ ջուրը մի մեծ քարի տեղաշարժումով աննշմարելի մի ջրանցքից դեպի ստորերկրյա ջրամբարներն էր հոսում ու, երբ բերդին պետք եղած ջրի պաշարը լրացվում էր, նույն քարը, որի վրա Աժդահայի կերպարը ցույց տվող մի փորվածք կար, դարձյալ իր տեղն էր գալիս և աղոթքների կամ մատաղների շնորհիվ Աժդահայից աղատագրված Օրորի ջուրը նույն ընթացքով շարունակում էր իր ճամփան։ Գաղտնիք էր մնում այն, թե ինչ միջոցներով և ինչ ուժի գործադրությամբ էին այդ քարը շարժել, ուստի քարի շարժը վերագրել են ջրերին գերիշխող Աժդահայի զորությանը։ Նույն վիշապն է, որ ոչխարների հոտի, կթվորների ու հովիվների հետ միասին բերդի ավերակներից հետո քարացել է Վիշապասարի ժայռերի վրա և այդ թվականից ի վեր Օրորը չի փոխել իր ընթացքը։

Հեթանոսական շրջանից սկսած, Հայաստանի իրական թե ավանդական պատմության մեջ իր համբավն ու պատվավոր տեղն է ունեցել Դերսիմից հյուսիս-արևմուտք, Երզնկայից արևմուտք, Սերովբե լեռան անմատչելի ապառաժների հովանավորության և պաշտպանության տակ գտնվող Ամուր բերդը կամ Անի ամրոցը, որի ավերակներն էին մնացել միայն։ Թեև կործանված, բայց այն պահում էր իր պատմական արժեքը։ Հայ հին մատենագրության մեջ թեև կան դրա վերաբերյալ մասնակի տեղեկություններ, բայց դժբախտաբար այն հնագիտորեն դեռևս ուսումնասիրված չէ։

Զանց առնելով սրան վերաբերող գրավոր տեղեկությունները[1], որոնք մատչելի են հետաքրքրվողին, ներկայացնում եմ իմ տեսածի նկարագիրը։

Իփրատի ափին, Կամախ (Քյամախ) քաղաքից վերև, ուղղահայաց կտրվածքով անմատչելի ժայռին էր բազմած ամրոցը։

Ծիտելերի ձորի արևելյան բարձունքի լեռնադաշտում էր գտնվում ս. Նիկողոսի ուխտատեղին, մինչև ուր վերելքը համեմատաբար դյուրին էր, բայց ուխտատեղիից վեր սկսվում էր թեք ապառաժների շարքը։ Առաջին և երկրորդ ապառաժ-

---

[1] Լեո, Հայոց պատմություն, Թիֆլիս, 1917, հատ. Ա, էջ 171։ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Թիֆլիս, 1913, գիրք Բ, էջ 145, 151, 163 (աշխարհարար)։

ներից հետո գալիս էր մի փոքր հարթություն, ապա սկսվում էր սանդուղքը, որն ուներ վեց հազար չորս հարյուր աստիճան։ Աստիճանների քարերը միաչափ ու միակտուր էին, սակայն դարերի ընթացքում անձրևներից ծեծված, խճաքարերով ծածկված, տեղ-տեղ նույնիսկ աննշմարելի դարձած։

Սանդուղքի աստիճանների վերջույթում, դեռ լեռան գագաթը չհասած, կար մի մեծ այրի մուտք, մարդահասակի չափ բարձր ու շատ լայն։ Մուտքի դռան աջ կողմը կանգնած էր սպիտակ մարմարից կերտված մի հսկա առյուծի արձան, որը նայում էր դեպի արևելք, իսկ դռան ձախ կողմը, միակտուր բոլորաձև քարե սյունի նման, մի կոթողի վրա, կոնակ-կոնակի քանդակված էր յոթ գեղեցկուհու արձան՝ տարբեր ձևերով և տարբեր դիմագծերով։ Այրի մուտքը, որ գտնվում էր երկու արձանների մեջտեղը, ուղղված էր դեպի արևմուտք։

Քարայրը փորված էր միակտուր ժայռի մեջ, որը ձգվում էր մերթ դեպի աջ, մերթ դեպի ձախ, բայց միշտ դեպի արևմուտք, տեղ-տեղ դրսից հաղիվ նշմարելի լուսանցքերով, բայց ներսից երկար և լայն բացվածքներով։

Բավական խորանալուց հետո ի հայտ էին գալիս նոր անցքեր ու նորանոր այրեր, մեկը մյուսի հետ կապված ուղիներով, մի տեղ՝ լայն ու երկար սրահ, մի ուրիշ տեղ էլ՝ դեպի խորը իջնող սանդուղքներ։ Շարունակելով իջնել կենտրոնական գետնուղու քարից շինված աստիճաններից և միշտ հանդիպելով մեծ կամ փոքր մուտքի դռների ու առանց շեղվելու կենտրոնական ուղուց, երկու ժամում կարելի էր հասնել Ամուր բերդի այն մեծ անցքին, ուր վերջանում էր կենտրոնական գետնուղին։

Անցքի բացվածքից տեսնվում էին հանդիպակաց քարայրների ծակերը. վերը՝ երկինքը, վարը՝ աղմկահույզ Եփրատը։ Մինչև ելքի սույն դուռը փորված գետնուղին գտնվում էր Եփրատի ձախ ափին, Դերսիմի թիկունքի ուղղությամբ։

Ելքի դռան աջ կողմը, հինգից-վեց մետր խորության վրա, մթության մեջ մի նոր դուռ էր բացվում, որը դրսից նշմարելի չէր։ Սա նոր գետնուղի էր, որը համաչափ սանդուղքների աստիճաններով իջնում էր դեպի վար, դեպի ապառաժի ընդերքը։ Պետք էր իջնել վար, խորանալ մինչև հասնելը սենյակի մեծությամբ մի կլոր հարթության, որտեղ վերջանում էր վտանգավոր վայրէջքը։ Այստեղ գետնուղին բաժանվում էր երկու մասի, առաջինը վայրէջքի գետնուղու շարունակությունն էր, որը բարձրանում էր, իսկ երկրորդը դեպի արևելք երկարող մի նոր դուռ էր՝ լայն և ուղիղ։

Առանց շեղվելու կենտրոնական վերելքի ճամփից և առանց կանգ առնելու որևէ բացվածքի առջև, ուղիղ հասնում էր վերելքի վերջույթի մոտ, դեպի աջ բացված մի նոր դռան, ուր գտնվում էր ընդարձակ մի սրահ զանազան բաժանումներով։

Կենտրոնական գետնուղուց վեր, ճիշտ հանդիպակաց ժայռերի մեջ, վերը նկարագրված դռան դիմացը, ապառաժի մեջտեղը, Եփրատի մյուս ափին Ամուր բերդն էր։ Վայրէջքը շարունակելով եկած ուղիով և վերադառնալով արդեն մինչ այդ անցած սենյակը, պետք էր անցնել դեպի արևելք երկարող գետնուղով, որն առանց սանդուղքի էր։ Այստեղ էլ զանազան ուղղությամբ փորված էին այրեր, պահեստի տեղեր, թաքստոցներ, բնակության համար սենյակներ։

Այսպիսով, Եփրատի տակից մերթ աջ, մերթ ձախ թեքվելով և մոտավորապես երեք ժամ քայլելուց հետո, գետնուղին թեքվում էր դեպի աջ և կրկին սանդուղքների օգնությամբ բարձրանում վեր, դեպի հարավ-արևմուտք, բայց ոչ շատ թեք։ Բավական ճամփա անցնելուց հետո, ուղին անսպասելիորեն անցնում էր Կամախի կիրճի վերը, բարձր ապառաժների ստորոտը, ճիշտ կիրճի մուտքի և Երզնկայի հովտի բերանը։

Ահա սրանք էին Անի ամրոցը և Ամուր (կամ Գառնի) բերդը, որոնք ամբողջովին վիմափոր (ժայռափոր) էին։

Սեպուհ կամ Դոհանամ կոչված և հայերի կողմից որպես սուրբ լեռ ճանաչված մի դագաթի ստորոտում էին գտնվում Տրդատի բերդի ավերակները։ Սրա կառուցման և կործանման ժամանակների մասին տեղեկություններ չկան։

Տրդատաբերդի ավերակների ծավալը, կառուցման համար գործածված սրբատաշ քարերի մեծությունը և բերդի իշխող դիրքը վկայում են, թե մինչև Ամուր բերդի տարածությունը պաշտպանելու սահմանված այս ամրոցը ժամանակին ինքնապաշտպանության մի ուժեղ պատվար է եղել։ Անուղղակի կարելի է ենթադրել նաև, որ այս շրջանը հին ժամանակներում հայաբնակ մեծ ավաններ է ունեցել, որոնց պաշտպանության համար էլ բերդը կառուցվել է։ Բերդի ավերակների տակ կար մի գետնուղի, որը մխրճվում էր լեռան սիրտը և սակայն կարելի չէր խորանալ՝ օդի ճնշումը և մարդու շնչառությունը կանգնեցնող մի կծու հոտ հարկադրում էր ետ դառնալ։

Արածանիի աջափնյա շրջանում Դերսիմի սահմանագծման առաջին ամրության գոտին

նկատվում էր Բերդակ գյուղի մոտ, Թիլի արևմտյան և Սավայի արևելյան կողմը գտնվող Բերդակ բերդը։

Համանուն գյուղը գտնվում էր երեք կողմից անմատչելի ապառաժների վրա թառած բերդի ստորոտում։

Բերդը, որ դեռևս կանգուն էր, իշխում էր Արածանիի հոսանքի և արևելյան ու արևմտյան շրջանների գյուղերի վրա։ Բերդ կարելի էր բարձրանալ միայն հյուսիսային կողմից, մի բարձունքի միջոցով։

Քրդերի մեջ ավանդաբար պատմվում էր, թե թրքական բանակը առաջին անգամ երբ Կարինը գրավելու համար Խարբերդից ճամփա ելած և Արածանիի ուղղությամբ ավելի կարճ ուղիով Բերդակ է հասած, ցույց տրված ընդդիմության պատճառով, ստիպվել է կռվի բռնվելու բերդապահների հետ, որոնք լեռնային շրջաններից իջնող աշիրեթների օգնությամբ պաշարել են թրքական բանակը և բնաջնջել։ Ասվում էր նույնպես, թե Տիգրանակերտ-Խարբերդ-Բերդակ-Ճապաղջուր-Կարին ամենակարճ ճանապարհը, այդ դիմադրությունից և բանակի բնաջնջումից ի վեր, անօգտագործելի է մնացել։

Բերդի կառուցման ժամանակի մասին տեղեկությունները պակասում են։

Բերդն ունեցել է ստորերկրյա ճամփաներ, գետնուղիներ (որոնց միջոցով հաղորդակցության կապը պահվում էր թիկունքի հետ) և շտեմարաններ։

Բերդի արևելյան կողմը գտնվում էին արհեստական բլուրներ, որոնց Հողդար անունն էր տրվել։ Ըստ տեղացիների, այդ բլուրների տակ գերեզմաններ կային։

Բոլոմորիի արևմտյան կողմը, դեպի Օվաճգ տանող ճամփի վրա, դեռ Քութու-տերեսիի կիրճը չհասած, բարձր ապառաժների խորքում գտնվում էին մի բերդի ավերակները, որին բնիկները Բոլոր-Մորիի բերդ էին անվանում։

Բոլոր-Մորին իր անունն առել էր տեղական պայմաններից։ Թե բերդը և թե Բոլոմորի գյուղաքաղաքը գտնվում էին անտառների մեջ և որովհետև տեղական բարբառով անտառին մորի անունն էին տալիս, ենթադրվում է, թե Բոլոմորին էլ իր անունն ստացել է «բոլորը մորի»-ից։

ՎԱՆՔԵՐ։ Ճաֆեր-պապա լեռան և Աստղաբերդի միջև ճիշտ բերդի բարձունքին, լեռնահովտի կենտրոնում էին գտնվում ս. Կիրակոսի վանքի փլատակները։

Պարսպապատ և մեկից ավելի եկեղեցիներ ունեցող այս վանքը ժամանակին ուսումնարան է եղել։ Մայր եկեղեցու կիսակործան գմբեթը, լայն և ընդարձակածավալ գավիթը, աբեղաների խցիկները, մառանների, պահեստների հսկա շարքը հիմքն էին վանքի հարստության և կուլտուրական մի օջախ լինելու մասին եղած ավանդության։ Ըստ շատերի վկայության, վանքն ունեցել է եղջերավոր անասունների մեծ հոտեր ու նախիրներ, աղնվացեղ ձիերի ու ջորիների երամակներ և բազմաթիվ փեթակներ։ Եվ արդեն վանքի բնական դիրքը, վարելահողերի ծավալը, մշակված պարտեզների վայրը, գլգլան առվակների ու բազմաթիվ աղբյուրների ներկայությունը, միացած լայնատարած արոտավայրերի և անտառածածկ լեռների իրական և բնական պատկերին, գլխավոր ապացույցներն էին հաստատելու համար վանքի նախկին շեն և փարթամ վիճակի մասին խոսվածքները։

Բացի տնտեսական հարստությունից, վանքն ունեցել է գրքերի և ձեռագրերի մեծ պահեստներ։ Ձեռագրերի մի մասը գտնվում էր Մամգանցիների աշիրեթի կրոնապետ սեիդ Իպրահիմի որդու՝ Ռզայի մոտ[1]։

Այս շրջանի ամենաբարձր դիրք ունեցող վանքը Կեիկ-տաղի երկրորդ գագաթի ստորոտում, Արմտիք գյուղի արևելյան և Գոմերի արևմտյան կողմը լայնածավալ մի լեռնադաշտի վրա կառուցված ո. Կարապետի վանքն էր (չշփոթել Մշո Սուլթան ս. Կարապետի և կամ Դերսիմի Հալվորի ս. Կարապետ վանքի հետ)։ Սա ևս ժամանակին ունեցել է բեղմնավոր կյանք։ Այստեղ նույնպես կային մշակելի հողատարածություններ, առատ ջրեր, անտառածածկ լեռներ և ընդարձակածավալ արոտատեղեր։

Ասվում էր, թե այս վանքն էլ, ս. Կիրակոսի նման, ունեցել է վանականներ և աբեղաներ, հարուստ անցյալ։

Դավթի սարի և Միանձում լեռան միջև, մի լայն սարահարթում էր գտնվում քարաշեն և պա-

---

[1] 1914 թ. գարնանը անձամբ հյուր եմ եղել կրոնապետ սեիդ Ռզայի՝ ալևիների եպիսկոպոսի մոտ և մեծ դժվարությամբ տեսել եմ մի շարք ձեռագիր ավետարաններ, գրչագիր մագաղաթներ, որոնց կարգին մի ձեռագիր օրինակ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից»։ Խոսակցության ընթացքում պարզվեց, որ ձեռագրերը վերցրել են նրանց նախնիները ս. Կիրակոս վանքից, ուր պաշտոնավարել են, և իրենցը նկատում էին դրանք, սակայն առանց հասկանալու լեզուն և կարենալ կարդալու։

ըստ պապատ Դավթա վանքը, որի կիսակործան խորանի կառույցը, վեմ քարերի փորագրությունները և վանականների ու ուխտավորների սենյակների փլատակները որոշ բան ասում էին դրա երբեմնի նշանակության մասին։

Վանքն ուներ մի մեծ գերեզմանատուն տապանաքարերով, որոնցից մի քանիսը դեռ պահում էին արձանագրության հետքերը։

Ամեն տարի աշնանը, կալերի ավարտումից հետո, Դերսիմի ամեն կողմից եկող հայ և քուրդ ուխտավորները մասամբ վերակենդանացնում էին անցյալի հիշատակներն ու եղբայրական սիրով ու խանդավառությամբ տոնում վանքի օրը։

Հայ կղերի ներկայության պարագային, քուրդ ոեյսերը, սեիդը և կամ փիրը մատաղի աղի օրհնությունը հայ կրոնավորին էին զիջում։

Միանձում լեռան բարձրավանդակի հարավային կողմը, մի մեծ քարանձավի ստորոտում, դալարագեղ և անտառածածկ սարահարթում, երկու ձորակների միացման տեղը կառուցված էր նախկին Միանձում վանքը, որի փլատակներն էին մնում։

Միանձումի քարայրից կաթող ջուրը ականջի ցավի բժշկության գեղ էր նկատվում, այնպես որ բացի աշնան ուխտագնացության օրից, տարվա բոլոր եղանակներին ուխտավորները և մատաղները անպակաս էին։ Ականջի ցավ ունեցող հայ թե քուրդ հավատացյալները դիմում էին ս. Միանձումի հրաշագործությանը։

Առեք գյուղի արևելյան կողմը, երեք գագաթների ստորոտի մի լայն լեռնադաշտում էին գտնվում ս. Աստվածածնի վանքի փլատակները։

Վանքի շրջակա լեռները ծածկված էին պտղատու ծառերի անտառներով, կային մշակելի հողերի լայնատարած դաշտեր, արոտատեղեր, առատ ջուր և մաքուր օդ։

Այո վանքը ևս ունեցել է բեղմնավոր կյանք։ Մնում էին վանքի ստորգետնյա կաթնատար «փորղանք»-ները (հողե խողովակներ), որոնցով փոքր ավազանի մեջ լցված կաթը վանքի գոմերից հոսել է մինչև Փականք գյուղը, ուր և մշակվել է։ Կաթի առաքումն ավարտելուց հետո, նույն խողովակներով վանքի ստորոտից բխող պաղ աղբյուրի առատ ջուրն է հոսել գյուղ։

Վանքի եկեղեցին և գավիթը թեև կիսակործան, պահում էին հայ հին ճարտարապետության դրոշմը։ Վանքն ունեցել է մեծ գրապահեստ հին մագաղաթներով։ Ձեռագրերի մի մասը գտնվում էր Պամասուրանների կրոնապետ Ճաֆերանցի սեիդ Ալիի որդի սեիդ Սուլեյմանի մոտ, որը ժառանգաբար պահում էր այն, որպես քրդերեն գրքեր։

Տուժիկ-պապայի անմիջական պաշտպանության տակ, Մալ լեռան արևմտյան կողմը, Զմբշկածուգի, Բերկրիի և Բալուի միջև, Դաշտակ գյուղի վերևը, խիտ անտառոտ սարահարթում վեհափառորեն բազմած էր Հալվորի ս. Կարապետ վանքը։ Սա, որ Դերսիմի ամենամեծ վանքերից մեկն էր նկատվում, ամբողջ շրջանի կողմից ճանաչված էր «Սուրբ Հրաշագործ» անվամբ։ Շատ հարուստ էր իր հնություններով, մասունքներով, եկեղեցական թանկագին սպասներով և ձեռագրերով ու մանավանդ հրաշագործության ավանդություններով։ Ըստ տեղեկությունների, այս վանքը մինչև 1938 թ. կանգուն էր։

Արսենիկի ստորոտում, եղբևանի վերևի ձորաբերանի հորձանքում էր գտնվում Բոզ վանքը (կամ Բոզավանք)։ Ասվում էր, թե ժամանակին կոչվել է Բյուզանդավանք։

Վանքը ժամանակին ունեցել է բեղմնավոր կյանք, պարտեղներ, վարելահողեր ու արոտատեղեր։ Տեղ-տեղ կանգուն մնացել էին պարսպի մասնիկները, խորանի մի մասը, գավթի դռան մոտ ընկած էին ծաղկազարդված մեծ խաչքարեր։

Քղիի հյուսիսային կողմը, Առինձ գյուղի վերևի ձորամիջում, գեղատեսիլ լեռնալանջին էին գտնվում Ամենափրկիչ (Փրկչա) վանքի ավերակները։ Այս էլ մյուսների նման ունեցել է հարուստ կալվածներ։ Թեև ավերակ, բայց կարևոր ուխտատեղի էր շրջանի հայ և քուրդ բնակչության համար։

Դերսիմի կենտրոնից դեպի Խոզաթ տանող ճամփու վրա, Սին գյուղի և Խոզաթի միջև ընկած Դաշտակ գյուղի բարձրավանդակում էին գտնվում Դաշտակա վանքի ավերակները։

Վանքի աջ կողմը կային վարելահողեր, թիկունքին՝ անտառ և արոտավայրեր, ձախ կողմը՝ պարտեզներ, առատ ջուր և բուսականություն։

Մի մեծ սրբատաշ քար, որ կիսով թաղված էր հողի մեջ, կրում էր հետևյալ արձանագրությունը՝ Ճ. Կ. Բ.։

Պաղր լեռան արևմտյան կողմը, բարձրադիր Խնձոր գյուղի վերևում, Հերտիֆ գյուղի հարավարևմտյան կողմն էին գտնվում Գուրզան (Գեորգան) վանքի ավերակները[1]։

---

[1] Գեո, քրդերեն նշանակում է խոլ (Գեորգան՝ խուլերին բժշկող սուրբ)։

Այս վանքը խուլերի բժշկության սրբատեղին էր և դերսիմցիների պաշտամունքի օջախը։ Տարվա մեջ մի քանի անգամ ամեն կողմից ուխտավորներ էին գալիս այստեղ և մատաղ մորթում։

Վանքը կառուցված էր 1152 թվականին։ Հայերից ոմանք այն կոչում էին Գուրգենավանք, իսկ Հերտիֆում բնակվող Միրագյան տան շառավիղներից Ակո Սեմ Միրագի աղան բացատրեց, թե սխալ է և՛ մեկ, և՛ մյուս անվանումը։ Ճիշտ կլինի ասել Գալաղյաց (կամ Գալաղիք) վանք։ Ըստ նրա, իր մեծ հոր պապը վանահայր է եղել և նա ճշտել ու հաստատել է վանքի հիմնադրման թվականը, որն արձանագրված է եղել աղոթագրքի կողին՝ «հազար սե բանճաս ու տրտե»[2] (1152 թ.)։

Վանքի ավերակների մեջ կային տապանաքարեր, որոնցից մեկի վրա քանդակված էր պատարագիչ եպիսկոպոսի պատկերը, որն ուներ 12 ոտք երկարություն։

Դերջանի արևմտյան կողմը, Մլբերդ լեռան ստորոտում, Զուրեն քրդաբնակ գյուղի մոտի ձորերի Կապույտ լեռան ու Զավակատուր (Օղլանվերեն) ժայռերի ճիշտ մեջտեղն էր գտնվում ս. Թորոսի վանքը, նշանավոր իր ավանդություններով և մասունքներով։

Քարաշեն ու պարսպապատ էր, եղել էր Դերջանի շրջանի առաջնորդանիստ վանքը, կառուցված Տրդատ թագավորի ձեռամբ[3]։

Վանքը թեև հարուստ չէր, բայց իր գոյությունը պահել էր մինչև 1915 թ.։ Վանքի վանապետները սերած էին Տեր-Սարգիս քահանայի թոռներից և դարձել էին 16 ընտանիք։ 1898 թ. ի վեր վանքը վանահայր չուներ և կառավարվում էր աշխարհական վանապետների կողմից, որոնք գրեթե սեփականել էին վանքի կալվածները և բաժանել 16 ընտանիքի միջև, որոնք զբաղվում էին երկրագործությամբ, խաշնարածությամբ և մեղվաբուծությամբ, ունեին հարուստ պտղատու ծառեր։

Վանքի պարսպից ներս եղած բնակելի կառույցները անբավարար նկատելով աճող բնակչության կարիքներին, հավաքական աշխատանքով և փոխօգնությամբ պարսպից դուրս կառուցել էին երկհարկանի բնակելի շենքեր, ուր բնակվում էին աճող ու բազմացող ընտանիքից բաժանվող անդամները։

Վանտպետները որևէ տուրք չէին վճարում էջմիածնի և կամ Կարինի ու Երզնկայի առաջնորդարաններին։ Նրանց եկամտի գլխավոր աղբյուրը պտղին էր։ Տարին մի անգամ ուխտի էր գալիս Դերջանի և Երզնկայի ամբողջ բնակչությունը։ Ուխտագնացության օրը խոտքաղին էր, Պենտեկոստեի տոնի օրը։ Տևում էր երեք օր։

Վանքը հեռու էր հայաշատ կենտրոններից՝ Երզնկայից ու Դերջանից, ուստի վերջինիս ուխտավորներն ստիպված էին մի օր գիշերելու Դրվնիկ գյուղում, իսկ առաջինինը՝ Խնձորեկ գյուղում։

Այս վանքը իր դիրքի և վանապետների աշխրջության շնորհիվ շատ մեծ դեր էր կատարում հայ ու քուրդ փոխհարաբերության տեսակետից։ Գտնվելով ավելի քան 360 քրդաբնակ գյուղերի կենտրոնում և անմատչելի ապառաժների մեջ, մի տեսակ հանգստակայանի դեր էր կատարում այդ շրջանի գյուղերի բնակչության և կամ հեռվից եկող ու անցնող ճամփորդների համար, որոնց առանց խտրության անվճար սնունդ և պատսպարան էր տրվում, որին նպաստում էին վանապետները։

Վանքը և վանապետների բազմանդամ ընտանիքները կառավարողը Փամպուխ մամն էր։ Հարյուր տարեկանի մոտ բարձրահասակ, հուժկու, արագաշարժ և շատ խելացի այս կինը պահակառանք էր ազդում ոչ միայն վանքի բնակիչներին, այլև ուխտավորներին, կրոնավորներին և նույնիսկ քուրդ կրոնապետներին ու աշիրեթապետներին, որոնք նվերներով դալիս էին նրա ձեռքը համբուրելու։ Փամպուխ մամը թեև անգրագետ էր, բայց ոչ ոք չէր կարող վիճել նրա հետ ազգային, հասարակական, քաղաքական ու կրոնական հարցերի շուրջը։

Վանքը վերանորոգվել է ԺԸ դարում։ Ուներ մոտ 30 մետր բարձրությամբ կաղնի փայտից մի ձող։ Տարին մի անգամ մեծ հանդիսավորությամբ, եկեղեցական արարողությամբ և պատարագի թափորով, պատարագիչ վարդապետի կամ եպիսկոպոսի առաջնորդությամբ, ձողը դուրս էր հանվում իր թաքստոցից և առաջնորդվում պարսպից դուրս բաց դաշտ՝ ս. Թևադորոսի նահատակված վայրը և այնտեղ կանգնեցվում ուղիղ սյան նման։ Ձողի գլխին ամրացված էր նահատակի մասունքը պարունակող մի մեծ խաչ։ Բոլոր ուխտավորները, առանց սեռի և տարիքի խտրության, հավաքվում էին ձողի շուրջը, տրված ազդանշանով երիտասարդները հերթով փորձում էին մագլցել ձողն ի վեր, հասնել խաչին, համբուրել այն և իջնել։ Տարիների ընթացքում քրտնած և թքոտած ձեռքերի

---

[2] Քրդերեն՝ հազար=հազար, սէ—հարյուր, բանճաս=հիսուն, տրտե—երկու։

[3] Տե՛ս Մովսես Խորենացի։ դիրք Բ, էջ 340։

շփումից ձողն այնքան հղկվել էր, որ կարծես ապակեպատված էր, այնպես որ մագլցել փորձող երիտասարդներից շատերը հազիվ երկու-երեք մետր բարձրացած, անմիջապես վար էին սահում։ Այս արարողությունը կատարվում էր կիրակի առավոտյան պատարագից հետո։ Իբր թե վեր բարձրացող և երեք անգամ խաչ-մասունքը համբուրող ուխտավորի փափագը կկատարվեր, բայց շատ քչերին էր վիճակվում այդ շնորհին արժանանալ։

Ծովի մակերեսից 3190 մետր բարձրություն ունեցող Քեշիշ-տաղի ստորոտում, Բթառիճ գյուղից կես ժամ հեռավորության վրա, Բաղնիքի լեռների միացման տեղի սարահարթում էր գտնվում զույգ եկեղեցիներով և բարձր պարիսպներով շրջապատված ս. Նիկողոսի վանքը։

Այս վանքն իր բոլոր հարմարություններով ծառայում էր ոչ միայն որպես ուխտատեղի, այլև Երզնկայի ու շրջականների ամառանոց, ուր օդափոխության էին գնում շատ քաղաքացիներ։ Իր պատմական և նշանավոր Հորը (արհեստական լիճ, որ ոռոգման էր ծառայում), պտղատու ծառերի պարտեղները և բնական զմայլելի տեսարանները այն դասել էին առաջնագույն ամառանոցների կարգը։

Ավելացած թթից մեծ քանակությամբ պաստեղ, շարոց և անուշ էին պատրաստում։

Վանքի հյուսիս-արևմտյան կողմը գտնվում էին պտղատու ծառերի և խաղողի այգիները, իսկ հարավային կողմը՝ բանջարանոցը և կալը։ Լիսաղբյուրի նշանավոր պաղ ջրի ակը գտնվում էր վանքի խորանի տակ, որը դուրս էր ժայթքում Բերդար կոչված բարձունքի ստորոտից, ուր գտնվում էին տանձի, ծիրանի, խնձորի և ընկույզի ծառաստանները։

Վանքի վարելահողը սակավ էր, ցորենի և գարու բերքը հազիվ բավարարում էր վանապետների ընտանիքների պետքերին, սակայն ուներ մեծ արոտատեղեր և ոչխարի հոտեր, կովերի նախիրներ ու փեթակներ, որոնք վանապետի սեփականությունն էին։

Վանքի վանապետը Բթառիճ գյուղացի քաջակորով Աբոն (Աբրահամ) էր, որը երկար տարիներ ի վեր պահում ու պաշտպանում էր վանքի հարստությունները (գրքեր, մասունքներ, ավետարաններ, եկեղեցական հարուստ սպասներ), կինը՝ Գարան նենեն, բոլորի մայրիկն էր, երեխաների նենեն (հորեղբորկին)։

Վանքը կանգուն ու անվթար մնում էր մինչև 1915-ի կոտորածները։

Հաջորդը Երզնկայից հյուսիս-արևելք, Քեշիշ-տաղի հսկա մի գահավեժի գլխին, սարալանջի գոգավոր մի խոռոչից դուրս ցցված և հսկա ժայռերի կատարին թառած արծվաբույնի նմանող ս. Պողոս-Պետրոսի վանքն էր, որն իր բարձր դիրքով իշխում էր Եկեղյաց գավառին և տեսանելի էր հովտի բոլոր գյուղերից։

Այս վանքը, որ մինչև այսօր կանգուն է մնում, ուներ հրաշալի եկեղեցի և բնակելի շենքեր, բայց իր շրջակա մի շարք հայ գյուղերի՝ Ճիմին (Ճիմքին), Փշկրթաղ (Փրկչաթաղ), Գալառիճ (Գալառիս), Քյարթաղ (Քարթաղ) բնակչության թրքանալուց հետո ղրկվել էր հասույթի աղբյուրներից, անապահովության պատճառով նաև ուխտավորներից և կորցրել անցյալի փառավոր հմայքը։

Վանապետները վախենում էին անասուններ պահել, թրքացած հայերը մոլեռանդ հայատյացներ էին, այնպես որ շատերը վախենում էին ուխտի գնալ, չենթարկվելու համար հիմինցիների հալածանքին։

Միառժամանակ վանքը գտնվել էր համբավավոր Տատյան ընտանիքի պաշտպանության տակ, որը վերանորոգել էր տաճարը, գավթի մի մասը և նյութապես օգնել այն պահպանող վանապետներին, սակայն տիրող անապահովությունը և վարելահողերի պակասը պատճառ էին եղել, որ վանքը կորցներ իր գոյության իրավունքը։

Դեպի վանքը տանող ճանապարհը շատ թեք և տաժանելի էր, վերևլքը՝ դժվար ու հոգնեցուցիչ։

Սբնգոր լեռան արևմտյան կողմը, Ջարտախլուի կիրճից դեպի արևելք, 2900 մետր բարձրություն ունեցող Աղտաղի գագաթից քիչ վար մի լեռան լանջին էր գտնվում Միավոր ս. Կարապետի վանքը։

Վանքը պարսպապատ էր, ուներ քարաշեն եկեղեցի, գավիթ, բնակության սենյակներ, բնական դիրքը՝ շատ գեղեցիկ, օդը՝ զով, ջուրը՝ պաղ, բայց հողազուրկ։

Ավանդաբար պատմվում էր, թե Կեսարիայից ս. Կարապետի մարմինը մի ջորու վրա բեռնած Հայաստան փոխադրելու ժամանակ, ջորին ճամփան շեղելով կորչում է։ Երկար փնտրելուց հետո ջորուն իր սրբազան բեռով գտնում են պառկած այդ վանքի տեղում, և դա է պատճառը, որ վանք կառուցելու ոչ մի հարմարություն չունեցող անտառազուրկ և ամայի այս լեռան վրա եկեղեցի են կառուցել ու վանք հիմնել։

Այս վանքը Տարոնի Գլակա վանքի ժամանակակիցն է և այդ թվականից ի վեր պահում է իր գոյությունը։

Վանքի վանապետները Կարմիր գյուղի Թորոսյան ընտանիքի անդամներն էին ու այն դարձրել էին մի տեսակ սեփականություն։

Երզնկայի արևմտյան կողմը, քաղաքից երեք ու կես ժամ հեռավորության վրա, Սեպուհ (կամ Գոհանամ) լեռան արևելյան բարձունքներից մեկի ստորոտում, Շոխա գյուղից քիչ վեր, գեղատեսիլ լեռնադաշտում էր գտնվում Շոխայի ս. Շողակաթ (Աստվածածին) վանքը։

Այս վանքը օդասուն, ջրառատ և դալարագեղ մի լեռնագետնի վրա թառած դիցուհու կերպարն ուներ։ Շոխայի ջուրը, որ իր ծագումն առնում էր Բիկունքի լեռներից, աղմկահույզ և փրփրալի անցնում էր վանքի առջևից։

Վանքը պարսպապատ էր, եկեղեցին մեծ և բարաշեն, գավիթը լայն ու լուսավոր, որի աջ և ձախ կողմերում բնակելի սենյակներ կային ուխտավորների կամ օդափոխության եկողների համար։ Ուներ ախոռներ, գոմ, մարագներ, լավ վարելահող, առատ ջուր, պարտեղներ, ընդարձակ արոտատեղեր, վանականների հատուկ սենյակներ և ճոխ գրական պահեստ։ Ինքնաբավ էր ու հարուստ։ Ուխտատեղի լինելուց ավելի ամառանոցային վայր էր։

Ըստ պահված արձանագրությունների, վանքը հիմնվել է Թադեա առաքյալի կողմից։ Ավելի ուշ մեծն Ներսեսը բարեկարգել և ընդարձակել է, վերածելով այն գիտության օջախի, որը պահել էր իր գոյությունը մինչև 1915 թ.։

Սեպուհ (կամ Գոհանամ) լեռան արևելյան կողմը, գյուղերից հեռու, բնական հազվագյուտ գեղեցիկ մի լեռնահովտի կենտրոնում, բոլոր կողմերից լեռնագագաթներով շրջապատված ու պաշտպանված երկու ձորի միացման տեղում էր գտնվում քարակերտ ս. Հակոբ Մծբնա հայրապետի վանքը։ Սրա մանավանդ եկեղեցու և գավթի կառուցվածքը, բնակության հարմար սենյակները մտավոր աշխատանքի համար անգնահատելի մի մենաստանի էին վերածել այն։

Վանքը պարսպապատ, քարաշեն, ամեն հարմարություններով օժտված մի սրբավայր էր։ Եկեղեցին իր բարձր դիրքով իշխում էր երկհարկանի քարաշեն ու լուսավոր սենյակներին, գավթին, պանգակատանը և մուտքի մեծ դռանը։

Վանահոր գլխավոր զբաղումը խաշնարածությունն էր, մեղվաբուծությունը և երկրագործությունը։ Ուներ քարաշեն պահեստի թաքստոցներ, պատմական հարուստ գրականություն և եկեղեցական հնություններ։

Պատմվում էր, թե վանքը ժամանակին գիտության և գրականության մի օջախ է եղել և թաքստոցը մի շարք վարդապետների ու գիտնական մարգոց։ Եթե ոչ իր անցյալի փառքը, գոնե գոյությունը պահել էր մինչև մեր օրերը։

Դարանաղյաց գավառի (Կամախ) հյուսիսային կողմը, երեք-եղբոր լեռան, Պահարկա-ձորի և Խանտա-ձորի միջև մի բարձունքում էին գտնվում ս. Սերովբե վանքի փլատակները։ Սա հիմնված էր Տրդատ թագավորի կողմից և իր ժամանակի ամենամեծ գիտական ուսումնարանն էր համարվել, ուր ուսանել են Հայաստանի ամեն կողմից եկած յոթ հարյուր գիշերօթիկ աշակերտներ։

Վանքի կալվածքների տարածությունը, վարելահողը, անտառածածկ լեռները, արոտավայրերի մեծությունը, ջրի առատությունը և բնական դիրքը հաստատում էին անցյալի բարգավաճության մասին եղած ավանդությունները։

Ուշադրության արժանի էին վանքի քարաշեն եկեղեցին, նրա աջ ու ձախ կողմերում՝ դպրեվանքի սրահների, հավաքական ճաշասրահների, գիշերօթիկ աշակերտների ննջասենյակների և մատենադարանի ավերակների ճարտարապետական կառուցվածքները։

Վանքը այդ շրջաններից սկսյալ մինչև ԺԳ դարը պահել էր իր ծաղկյալ վիճակը, ունեցել էր խոշոր եղջերավոր անասունների նախիրներ, ձիերի երամակներ, ոչխարի հոտեր, փեթակներ, գոմեր, մարագներ և ամառանոցներ։ Վանքն ինքն է մատակարարել աշակերտության և պաշտոնեության բոլոր պիտույքները, սնունդը, հագուստը։ Նա այս շրջանի գիտա-կրթական ամենամեծ օջախն է եղել։ Ասվում էր, թե Հովհաննես վարդապետ Երզնկացին (Պլուզ) այս վանքի ուսանողներից է եղել, այս մասին գրավոր վկայություն կար ս. Հակոբ Մծբնա հայրապետի վանքի մատենադարանում։

Ս. Սերովբե և ս. Քերովբե վանքը կոչվելիս է եղել նաև ս. Մինասի անապատ։

Սերովբե և Սեպուհ լեռների միացման տեղը, դեպի Սեպուհ թեքվող աջ կողմի բարձունքի երկու հորերի լեռնահովտում կառուցված է եղել Դարանաղյաց գավառի ամենահին վանքերից մեկը՝ Ավագ վանք անունով։

Շրջակա լեռները անտառածածկ էին, լեռնահովիտը՝ գեղատեսիլ, օդը՝ զով, ջուրն՝ առատ,

ուներ վարելահող և ընդարձակ արոտավայրեր։ Վանքը կառուցված էր Կարմիր քար կոչված հսկա մի սարի ստորոտում, որի սրբատաշ քարերից շինված կաթողիկեն իր երեք խորաններով, հայ հին ճարտարապետության գլուխգործոցներից մեկն էր նկատվում։

Տաճարներից մեկը (խորան) կոչվում էր ս. Աստվածածին, որը, ըստ ավանդության, կառուցված է Թադեոս առաքյալի կողմից։ Մյուսը ս. Կարապետի կաթողիկեն էր, որ հիմնված էր Գր. Լուսավորչի կողմից, իսկ երրորդը, ամենամեծը՝ ս. Թադեոսին նվիրված կենտրոնական տաճարն էր, որի մուտքի գռան եպենոսի հաստ տախտակների վրա քանդակված էր Քրիստոսի և նրա աշակերտների խմբանկարը։ Կար նաև երկարաձիգ և երկարաձև երկաթագրերով փորագրված մի հիշատակարան։ Այս դուռը եվրոպացիների կողմից որպես հնություն բարձր էր գնահատված և մեծ գումարներ էին առաջարկվել, բայց չէր ծախվել։ Եպենոսե այս մեծ դուռը իր քանդակներով և արձանագրությունով անվթար էր մնում մինչև մեր օրերը։

Վանքը թեև շրջանի հայության կողմից Ավագ վանք էր կոչվում, բայց ժամանակին անվանված է եղել նաև Կառնո կամ Գառնիի վանք, Լուսավորչի անապատ և Թադեոս առաքյալի կամ սոսկ Առաքելոց վանք։

Ավագ վանքը, որ մինչև 1915 թ. պահել էր իր գոյությունը և ինքնաբավ ու բարգավաճ վիճակ ուներ, այդ շրջանի վանքերից ամենահարուստն էր նկատվում ոչ միայն իր մասունքներով, մագաղաթներով և հնություններով, այլև պատմական մեծ արժեք ներկայացնող իր մի հակինթով։ Հակինթը փոքր ձվի չափ, բայց բոլորակ երկնագույն մի քար էր, փայլփլուն ու լուսաշող, զետեղված մագաղաթապատ եպենոսե մի տախտակի կենտրոնում, որը պահվում էր անմատչելի թաքստոցի մեջ, որի մուտքն ու ելքը միայն վանահայրերին և նրանց հաջորդած վանապետներին էր ծանոթ։

Արժեքավոր այս հնությունը պահված տեղից դուրս էր հանվում մեծ արարողությամբ և ցուցադրվում բժշկության եկող ուխտավորներին։ Այն իր բուժիչ հատկությամբ Դեղքափ անունն էր ստացել։ Մի շարք եվրոպացի հնագետներ առասպելական գումարներ էին առաջարկել այն գնելու համար, բայց ավանդապահ վանահայրերը կամ նրանց ժառանգորդները մեծ երկյուղածությամբ և հավատարմաբար պահում էին այն մինչև մեր օրերը։

Հակինթի աջ ու ձախ կողմերում հռոմեական Կոստանդիանոս կայսեր և կայսրուհու նկարներն էին արված իրենց ստորագրություններով, իսկ երկու նկարների մեջտեղը, ուր մի խոռոչ կար, ասվում էր, թե սուրբ Լուսավորչի ատամն է զետեղված եղել, որը ընկել ու կորսվել է, և կամ վերցված լինելով, խոռոչը պարապ էր մնացել։ Ավանդաբար պատմվում էր, թե Տրդատ թագավորը, քրիստոնեությունն ընդունելուց հետո, այցելել է Հռոմի Կոստանդիանոս կայսեր և կայսրն ու կայսրուհին, պատվելու համար քրիստոնյա իրենց եղբայրակցին, իրենց նկարներով և ստորագրությամբ թանկարժեք այս հակինթը նվիրել են հայոց թագավորին։

Ավագ վանքի բնական դիրքն ու գեղեցկությունը, օգն ու ջուրը, կաթողիկեների պատմական կառույցը և վանքի հնադարյան պատմական դուռը դասել են այն այս շրջանի վանքերի ամենահների կարգը և համարել են ամենաավագը[1]։

Գառնի գյուղից բավական բարձր (չշփոթել Երևանի մոտ գտնվող համանուն գյուղի հետ), Սեպուհ լեռան կենտրոնական գագաթի ստորոտում, Ամենափրկիչ վանքի ավերակների դիմացը, Տրդատս բերդի ավերակներից վերև, բնական շատ գեղեցիկ մի սարահարթում վեհափառորեն կանգուն էր մնում հնադարյան ս. Գրիգոր Լուսավորչի վանքը՝ Մեծ Լուսավորիչ անունով։

Սա ևս մեծ ուխտատեղի էր։ Թեև ղուրկ հարուստ վարելահողերից, ուներ ընդարձակ արոտավայրեր և անտառներ։ Վանքը թեև գտնվում էր Դարանաղյաց գավառի սահմաններում, սակայն վարչականորեն ենթակա էր Երզնկայի առաջնորդարանին։

Վանքն ուներ երկու ջրառատ մեծ աղբյուր՝ Տրդատա բերդի Լիսաղբյուրը և Բարեհամի աղբյուրը, որը, ըստ Ներսես Շնորհալու վկայության, Գր. Լուսավորչի հրաշագործությանն էր վերագրվում և ապառաժների ընդերքից էր դուրս ժայթքում։

Տրդատա բերդի ստորոտում, դեպի Գառնի տանող ճամփու վրա, Լիսաղբյուրին շատ մոտիկ կար երկու հավասար մասի բաժանված մի հսկա ապառաժ՝ ուղղահայաց ձևով կանգնած անտառի

---

[1] 1955 թ. Երևանում հանդիպեցի 1916—1918 թվականներին Հայաստան ներգաղթած Երզնկացի Աշխեն Մատենցյանին և Տրդատ Ճիկերճյանին, որոնք Ավագ վանքի եկեղեցական մի շարք իրեր տեսել ու հանձնել են Էջմիածնի թանգարան։ Իսկ նշված հակինթը թաղել են վանքի թիկունքին գտնվող Կարմիր ժայռի քարայրում և կամ Լիսաղբյուրի մոտ, մի գարավոր ծառի խոռոչում։

եղերքին։ Ավանդաբար պատմվում էր, թե Տրդատ թագավորը սրի մի հարվածով երկու մասի է բաժանել այն։

Վանքից դեպի հարավ-արևելք, Սեպուհի երկրորդ գյուղաթի ապառաժների մեջ ուխտագնացության երկու այր կար, մեկը Հռիփսիմե, մյուսը Մարիամ անունով, որոնք այդ երկու կույսի ճգնարաններն են եղել, ուր ճգնել է նաև Գր. Լուսավորիչը[1]։

Ինչպես ս. Հակոբա, Ավադ, նույնպես և Գր. Լուսավորչի վանքերի վանահայրությունը մոտավորապես երկու հարյուր տարի, ժառանգաբար մինչև 1915 թ., վարվել էր մի ընտանիքի՝ Փրոխորոնյան տան կողմից և գրեթե դարձել նրա սեփականությունը։

Վանահայրերից հիշվում էին քաջամարտիկ, բաջակորով հսկա Տեր-Հարություն քահանայի անունը և գործերը, որը ապրել է ավելի քան հարյուր տարի, և որի հաջորդն է եղել իր արժանավոր զավակը՝ Տեր-Վրթանես քահանան։ Մինչև մեր օրերը վանքի վանահայրն էր Տեր-Վարդան քահանան։

Ղազան-Ղայա լեռան և սուրբ Եղիա դալարագեղ սարի միացման տեղը, Քրդգեղի վերևը, բնակոն շատ դեղեցիկ մի վայրում էր կառուցված անցվորիկ (ուշաթափվող) երեխաների ամենակարող բուժիչ սուրբը՝ ս. Կիրուկոսի վանքը։ Սա վարելահող չուներ, բայց ուներ լավ արոտավայրեր, ջուր, ղուլալ օդ ու կարողացել էր գոյությունը պահել մինչև 1915 թ.։

Եկեղեցին քարաշեն էր, ուներ բնակության հարմար սենյակներ, պարսպից ներս՝ մի մեծ սայվանտ (այվան), ուր ուխտավորներն էին պատսպարվում, իսկ բնակելի սենյակները վարձու էին տալիս օդափոխության եկողներին։

Վանքն ուներ ձեռագրերի և զանազան մագաղաթների հարուստ պաշար, որոնց մեջ ամենաարժեքավորը հինգերորդ դարի մագաղաթե «Այսմավուրքն» էր, ուր արձանագրված էին ոչ թե եկեղեցական աղոթքներ, այլ ժամանակի դեմքերն ու դեպքերը, կատարված շինությունները, պատերազմները և տեղափոխությունները։ Դա մի տեսակ պաշտոնաթերթ և կամ լրատու էր։ Դժբախտաբար այդ արժեքավոր ձեռագիրը 1901 թ. գողացվել էր վանքի հոգաբարձու տխրահռչակ Հովհաննես Թոթիկյանի կողմից և Այնթապում 300 ոսկով ծախվել մի եվրոպացու, որն էլ հանձնել էր Լոնդոնի թանգարանին։

Սուրբ Եղիա լեռան դեպի վանքը նայող ժայռերի մեջ մի այր էր փորված, որը Մատուռիկ էր կոչվում և իր անառիկ դիրքի շնորհիվ հեթանոսությունից քրիստոնեությանն անցնելու շրջանում որպես թաքստոց էր ծառայել մի շարք մտավորականների, որը վկայող արձանագրությունները պահված էին վանքի մատենադարանում։

Մնձուր լեռան արևմտյան սարալանջին, Ղազան-Ղայայի արևելյան կողմը, գյուղից վերև ընկած դալարագեղ մի լեռնադաշտում Տրդատ թագավորի կողմից կառուցվել էր Տիրուշեն վանքը, որը մեծն Ներսեսի աճյունը այդտեղ փոխադրվելուց հետո վերանվանվել էր ս. Ներսես Հայրապետի վանք։

Վանքը շրջապատված էր բերդի ձևով և ինքնապաշտպանության բոլոր հարմարություններով։ Վանքի գլխավոր կաթողիկեն իր հարակից գմբեթավոր եկեղեցիներով կառուցված էր մոխրագույն սրբատաշ քարերով, կաթողիկեի գլխավոր տաճարն առանձնացված էր մյուս եկեղեցիներից, աջ կողմը շինված էր մի մեծ ավանդատուն՝ Տաճարիկ անունով (սրանից Տաճրակ գյուղն ստացել էր իր անունը), իր խորանով և մկրտության ավազանով։

Խորանի ետևը, անտեսանելի մի տեղ, շատ մեծ ճարտարությամբ զետեղված էր ստորերկրյա մի թաքստոցի դուռը, որը քարակերտ սանդուղքներով իջնում էր ժայռերի մեջ փորված և ամեն կողմից պաշտպանված այն քարանձավը, ուր պահվում էին վանքի հարստությունները (մագաղաթներ, գրչագիր մատյաններ, ոսկե խաչեր, եկեղեցական թանկարժեք սպասներ և մասունքներ)։

Մայր տաճարի, երկու կաթողիկեների և ավանդատան բոլոր դռները կիպարիսի փայտից շինված ու քանդակազարդ էին։ Մանավանդ կենտրոնական մեծ դուռն իր արձանագրություններով և գեղակերտ նկարներով գերազանցում էր բոլորին։ Այն անվթար էր մնում մինչև մեր օրերը։ Կենտրոնական խորանի մեջտեղը զետեղված էր մեծն Ներսեսի յուղաներկ մեծ անդրին, իսկ խորանի աջ կողմի պատի մեջ զետեղված մեծ և երկար մի քարի վրա կար մի անընթեռնելի արձանագրություն։ Այս բոլորից ամենաարժեքավորը Ներսես Շնորհալու դամբարանն էր, որը գտնվում էր կաթողիկեի տաճարի խորքում։ Գեղակերտ տապանաքարի վրա արձանագրված էր հայրապետի աճյունները Թիլ ավանից Տիրաշեն փոխա-

[1] Տե՛ս Մովսես Խորենացի, դիրք Ը, էջ 242—244։

գրվելու և այս տառարի մեջ թաղվելու, Տիրաշեն անունը Ներսես հայրապետի վերափոխվելու մանրամասն պատմությունը։ Տապանաքարի արձանագրության ձեռագիր բնագրից մի-մի օրինակ 1880 թ. Երզնկայի առաջնորդ Դիմաքսյան եպիսկոպոսի կողմից ուղարկվել են Պոլսո պատրիարքարան և Էջմիածնի Գևորգ Դ կաթողիկոսին։

Վանքը իր բոլոր հարմարություններով, ճարտարապետական կառույցներով, մշակելի հողերի, արոտավայրերի, այգիների և պտղատու ծառերի հարստությամբ աչքառու տեղ էր գրավում համանման հաստատությունների կարգին և պահպանում էր անցյալի փառքի ու վեհության շունչն ու դրոշմը։

Անցյալ դարի ութսունական թվականներին Երզնկայի առաջնորդ Հմ. Դիմաքսյան եպիսկոպոսի ջանքերով և Պոլսո մեջ կազմված «Միացյալ ընկերության» նյութական օժանդակությամբ կառուցվեց մի նոր դպրոցի շենք։ Դա որբանոցի անվան տակ մի մեծ ուսումնարան էր, ուներ 30—40 աշակերտի համար ննջարան, ճաշարան, դասարան և պարապմունքի սրահ։ Նպատակն էր՝ հեռու ընդհանուր աղմուկից և տեսողությունից, դաստիարակել գիտելիքներով օժտված մի սերունդ։

Այս ուսումնարանն ընդունվում էին բացառաբար քրդական շրջանների հայկական նախակրթարանների մեջ ուսած և աչքի ընկնող աշակերտները, որոնք պարտավոր էին քրդերեն խոսել իմանալ։ Հակառակ սուլթան Համիդի վարած հայահալած քաղաքականության և այս շրջաններում բարձրագույն կրթության արգելքներին, այստեղ պատրաստում էին հայ և քուրդ ժողովրդական գործիչներ, որոնք պիտի պաշտոնավարեին քրդաբնակ շրջաններում «Միացյալ ընկերության» կողմից բացված վարժարաններում։ Ուսումը ձրի էր, ուսման շրջանը՝ երեք տարի։ Շրջանավարտը թե՛ ուսուցիչ և թե՛ զինվորական էր, նույնպես և ազգային գործիչ։

Սակայն հազիվ էին առաջին շրջանավարտները տեղավորվել Խնձորեկի, Քղիի, Հերտիֆի և Մելիքանի նորակառույց դպրոցներում, ուր սովորում էին հայ ու քուրդ աշակերտներ, թուրք կառավարությունը փակել տվեց ուսումնարանը և ձերբակալեց տնօրենին։ Մի քանի տարի հետո կրակի տրվեցին նաև վերը հիշված շրջանների «Միացյալ ընկերության» վարժարանները։ Սակայն այդ կարճ ժամանակաշրջանն իսկ բավական եղավ, որ այդ դպրոցների մեջ ուսած հայ և քուրդ աշակերտները կարենային հայերեն տառերով գրել ու կարդալ քրդերեն, նույնպես և քրդերը ծանոթանան հայոց լեզվին ու պատմությանը և խոսեն ու գրեն հայերեն։

Կյոլնցիք և Երկան գյուղերից վեր, Մեռձան լեռան հյուսիսային սարալանջին և Մնձուրից հոսող ջրառատ գետակի ափին, մի բարձունքի վրա կառուցված էր պարսպապատ և բերդանման ս. Դևորգի վանքը։

Վանքի եկեղեցին քարուկրից էր շինված, մի տեսակ ամրոցի տպավորություն ուներ։ Դրա աջ ու ձախ կողմերում կառուցված էին բնակության համար սենյակներ, հանրակացարան և գավիթ։ Բակում կային շատրվան-ավազան և գոմեր, ախոռներ ու մարագներ։ Վարելահողի պակասը վանապետներին հարկադրել էր պարապելու առավելապես անասնապահությամբ, որովհետև վանքն ուներ լեռնային լավագույն արոտավայրեր և անտառածածկ բարձունքներ։

Այստեղ չկար մյուս վանքերի բեղմնավոր կյանքն ու գործունեությունը, վանքը զուրկ էր նույնիսկ անցյալի հնություններից, չուներ աչքի ընկնող որևէ ձեռագիր և կամ մատյան։

Ս. Գևորգը պղնձագործության պաշտպան և հովանավոր սուրբ էր համարվում, գտնվում էր պղնձագործ արհեստավորների անմիջական հոգատարության տակ։ Վանքը կանգուն էր մինչև 1915 թ.։

Մեռջան լեռան ստորոտում, Մեռջանի գետի աջ բազուկի եզերքին, Ուռեկ, Բլուր և Գոմգոր գյուղերի մեջտեղի լայնածավալ մի լեռնահովտում էր հիմնված Ջարշարանաց լուսավորիչ կամ Տատասկի վանքը։ Դերսիմի քրդերը Ջիարե լուսավորիչ և կամ Ջիարե Մեռջան էին անվանում այն։

Վանքը պարսպապատ էր, եկեղեցին և գավիթը գտնվում էին հարավային կողմը, իսկ բնակության շենքերը, լուսավոր և օդասուն սենյակները, մեծ ճաշարանը, խոհանոցը, մառանը և պարապմունքի դահլիճը՝ արևելյան կողմը։ Բակի արևմտյան մասը հատկացված էր ախոռի գոմին, մարագին և մեղվանոցին։ Բակի կենտրոնում գտնվում էր ջրառատ աղբյուրը՝ մեծ ավազանով և մանավանդ ճեմելավայրով։ Հյուսիսային կողմի պարսպի երկու ծայրի վրա կառուցված էր երկու մեծ և բարձր աշտարակ, որոնք որպես դիտարան-ամրոցներ ծառայում էին վանքի ինքնապաշտպանությանը։

Ուներ հարուստ վարելահող, խաղողի մեծ այգիներ, պտղատու ծառերի պարտեզներ և արոտատեղեր։ Հարուստ էր նաև հնություններով, կենտ-

ոնական խորանին կից կառուցված էր ստորերկրյա մի թաքստոց, ուր պահվում էր Լուսավորչի արծաթե ոսկեզօծ աջը, որի մեջ վետեղված էր սրբի մասունքը։ Կային նաև շատ սպասներ, մազաղաթե մատյաններ, ձեռագիր ավետարաններ և երկաթե փոքրիկ տատասկներ (մեխեր), որոնց վրա, ըստ Ագաթանգեղոսի վկայության, չարչարել էին Գր. Լուսավորչին, ուստի այստեղ էլ կառուցել էին Տատասկի վանքը՝ Չարչարանաց լուսավորիչ անունով։

Ավանդաբար պատմվում էր, թե այս վանքերի մի մասը կործանվել է Ջալալիների արշավանքի ժամանակ (1604—1606), ապա կրկին վերաշինվել։